

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՅՈՐԷՆ-ԽՐԱԿՐԱՊԵՏ Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութիւն

- Վիքթոր Հիւկոյի կենդանագիրը 97
- 1. Վիքթոր Հիւկո (Մ. Պ.) ... 98

Դասախօսք. եւ Հրատարակախօսք.

- 2. Բուսակենսիկներ եւ վարակիչ հիւանդութիւններ — Փրօֆ. Տակիլլօն — (ՆՇՍՆ) . 109

Գիտական Լուրեր եւ Նորութիւններ

- 3. Վիքթոր Հիւկոյի Հարիւրամեակը 118

- 4. Բուժիչ Լոյսը 119
- 5. Ծաղկախաի դարմանը դարեջուրի քաղցունով 120
- 6. Մսակեր հաւերու հաւկիթները 121
- 7. Բորոտատուն մը Միացեալ-Նահանգներու մէջ 121

Վերջին Հրատարակութիւններ

Հայերէն Թերթեր

- 8. Պարբերական Մամուլ (Մ. Պ.) 122
- 9. «Արաբիս (Ա.-Մ) 124
- 10. «Բանասէր (Կ.Կ.) 127
- 11. «Բազմավէպ» եւ «Գեղունի» 128

Բ. ՅՐԶԱՆ (1901-1902, ՄԱՐՏ) ԹԻՒ 4,

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ — ՏՊԱՐԱՆ

4, Rue Ortolan - PARIS

ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

1. Պատկերաբան Աստուածաշունչ Ս. Գրոց Հին Կսակա-
րանի (Բ. տպագր.): Գ. Լուսինեան (1901 — Փարիզ):
2. Մարդկութեան ակեմալեթ բշկալիկ (հրատարակ-
Պարսկաստանի Հակալքլ. ընկերութեան): Կազմեց դոկտ.
Կ.Յ.Փաշաեան: Այս գրքով կը ձրի կը զրկուի ցանկացողներուն:
3. Բժիշկ Սիմէօն Շահ-Նազարեանցի հրատարակու-
թիւններէն (Մոսկուա)
 - ա) Մարդասիրութեան եւ Աշխատակի՛ն ազնիւ գիւ-
ւորը Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկիյ. գին 60 կոպ.:
 - բ) «Մշակ»ը. գին 1 ուռլի:
 - գ) Հայ Դպրոցի Յաւերից (վարչականի շուրջը). I
մաս, գին 1 ուռլի:
4. Երկու Օրացոյց Վեհ. Հայրապետէն:
5. Մուրճ Անապիր, Յունուարի թիւը:
6. Լուսն Երկանեսակ (Յունուար եւ Փետր. թիւը):
7. Ժառանակ (Բ. համար), տպ. Պ. Միսաք—Փարիզ 1902:
8. *Le Droit Arménien*. K. J. Basmadjian—Paris
9. Շրջաբերական առ Ազգային Փարիզի, (Փարիզի Հայոց
Բարեկործական ընկերութեան նորընտիր Գործադիր ժողո-
վոյ կողմէն): Տպագր. Պ. Միսաք 1902:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վարոնեթ (Ռուսիա) Տէր. Փանոսեան եղբարց մօտ աշխա-
տող մի ինչ որ տղայ, Միհրան Թիւթէլեան, ստանում է
«Համալսարան»ի Ա. շրջանի 12 համարները երկու օրինակ
խնդրագին նամակներով, առաջարկելով միեւնոյն ժանանակ
դործակալ լինել մեզ: Միամտաբար յղում ենք համարներին,
բայց բաժնեգին չենք ստանում: Բազմաթիւ նամակներով
բաժնեգինները պահանջում ենք, բայց ոչ մի պատասխան
չենք ստանալ: Սպառնում ենք հրապարակաւ խայտառակել
անպարտաճանաչ պարոնին: Այս վերջին պարագայում նա
մեզ յետ է դարձնում «Համալսարան»ի կեղտոտած համար-
ներին, որոնք փողով բնականաբար ճամբել էինք իրան:
Ահաւասիկ մի կեղտոտ եւ նոր տիպի ձրիակերութիւն,
որ կարող է դաս լինել անխիղճ պորտաբոյծներին, որպի-
սին է Միհրան Թիւթէլեան:

Մեր յարելի եւ պարտաճանաչ բաժանորդներէն կը
խնդրենք որ իրենց բաժնեգինները շուտով մեզ յղեն:

Կան ոմանք որ տակաւին չեն զրկած, հակառակ մեր
յայտարարութիւններուն, իրենց անցած տարուան բաժա-
նորդագրութիւնը: Թող փութան պարտքերին կատարել
կիթէ չեն ուզեր Միհրան Թիւթէլեաններու կարգին մէջ
նշանակուել, հրապարակաւ:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ Ծրոյ Թիւ՛՛՛՛ ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է:



ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

Հայ մամուլին մէջ զժգո՛հ աղաղակներ կը բարձրանան միշտ, թէ մեր քննադատական ոգին խիստ տկար է, խիստ սահմանափակ է, խիստ եսական է եւ վերջապէս խիստ հարեւանցի է :

Լուրջ քննադատութիւնը կը պակսի մեր մէջ. . . կը պօռան ցաւազին հեծկլտուքներով :

Պիտի ջանանք, այսօր, քննադատութեան սահմանը տալ, որ մեզի ցոյց պիտի տայ թէ գրական այդ ձեւը չէ որ մեզի կը պակսի, այլ զայն լիակատարօրէն եւ ձեռնիւնդեցութեամբ վարելու հեղինակ ուժը :

Լաւագոյն քննադատութիւն փնտռողները անհատապէս յոռեգոյն քննադատներն են : Այն որ ըմբռնած է, — թէ քննադատութիւնը իր լայն իմաստովը դժբաղդարբ գոյութիւն չունի մեր մէջ, — անշուշտ ըմբռնած ալ ըլլալու է թէ ի՞նչ է ճշմարիտ քննադատութիւնը, ինքնին : Բայց տակաւին չտեսնե՞ք՝ մինչեւ այսօր՝ մէկը, որ, փոխանակ ուղիորէն եւ բուխ սրտով ողբալու, ըսէր թէ ի՞նչ յատկութիւններ հարկաւոր են իր սիրտը հիւժող ցաւին պատճառը բառնալու :

Այո՛, դիւրին բան մըն է քննադատութիւնը այնքան՝ որքան դժուարին : Գործ մըն է անազնիւ եւ անօգտակար եթէ զուրկ է դաստիարակիչ եւ ստեղծագործող ոգիէն : Կարելի է միշտ խօսիլ եւ գրել որ եւ է նիւթի վրայ, բայց թէ ի՞նչպէս . . . : Քննադատ ըլլալու համար պէտք է ունենալ բազմակողմանի զսրգացում, պէտք է ունենալ որոշ սկզբունք, հակառակ պարագային ժողովրդային նախապաշարունակներու եւ ամբոխային տգիտութեան որակը իր կշռող ներգործականութեան տակ կը խոչտանգէ մեկնաբանութիւնը : Քննադատութիւնը նուաստացում մըն է այդ պարագային՝ ոչ թէ քննադատելի նիւթին՝ այլ քննադատողին համար : Ու այն խեղճուկրակ յղացումները, որոնցմով կը գատափետուի գործ մը, այն անձան ու շատախօս բացատրութիւնները որոնք կը արուին անոր համար, չափազանց կը բնորոշեն անհամեմատ բարձրութիւնը քննադատուած գործին, եւ միայն այս վերջինին ջախջախիչ գերակշռութիւնը :

Արուեստով, կոչումով ու զարգացումով քննադատը

սակայն, ամրապնդուած այն ընդհանուր սկզբունքներով որոնք անհրաժեշտ են գործի մը մանրամասնութեանց թափանցելու, գուշակելու եւ ըմբռնելու անոր ոգին, հեղինակին նկատումներն ու միտումները՝ պայծառօրէն, բնականօրէն եւ առանց բռնազօսիկ խարխափումներու կը ծանուցանէ ճշմարտին, գեղեցկին եւ արուեստին համար իրական արժէք մը : Կը ստեղծէ խիստ ոգեւոր, խիստ ազնիւ շարժում մը, որ մարդկային մտքի այդ ստեղծագործութեան բեւեռները կը տարածուի : Արուեստին գիտակցութիւնը, նաեւ, իր հետ կը վարէ զուգահեռաբար խոշոր պատասխանատուութիւն մը . քննադատի պաշտօնը կը դժուարանայ այդ պահուն, ու վճռականութեան մը հասնելու բաղձանքին մէջ՝ ընկճող տկարութեան մը գոյութիւնը կը զգայ ան իր մէջ :

Քննադատը, այդ վայրկեանէն յետոյ, կրթիչ մըն է հասուն մտքերու, եւ վարիչ մը հոսարակական կարծիքին . կը ծանուցանէ հոս տաղանդի մը գոյութիւնը, հոն գործի մը նորութիւնը եւ տեսակարար բնորոշութիւնը : Կարծիքներու կանխած եւ անոնց յաղթանակած՝ հեղինակ ուժ մըն է այդպիսի քննադատը եւ վարպետ մը՝ ընդհանուրին համակրանքով եւ վստահութեամբ պսակաւորուած :

Ի՞նչ պէտք է ըլլան քննադատին բարոյական յատկութիւնները, անոր մտաւոր կատարելալ կարողութիւններու ջով : Քանի որ անոր քննադատութեան ոգիէն կախուած է համբաւն ու ասպարէզը՝ անծանօթ բայց պատկառելի հեղինակաւոր ուժի մը, արուեստագէտի մը, անհրաժեշտ է որ այդպիսին անձնաւորէ նաեւ վեհանձն եւ բանիմաց, փափկանկատ եւ անաչառ, գերծ ամէն նախապաշարումէ եւ շահախնդրութենէ՝ ոգի մը :

Քննադատութիւն մը սակայն կրնայ տարբեր երեւոյթներու տակ ներկայանալ . կրնայ վարուիլ տարբեր մեթոտներով եւ տարբեր ըմբռնումներով : Անիրաւած պիտի չըլլա՞նք քննադատի մը դէմ եթէ զայն դատափետենք մեր պատկանած այս կամ այն դպրոցին իմաստասիրութեամբը : Կամ սխալ մը ըրած կ'ըլլանք, եթէ իւրաքանչիւր քննադատ իր փիլիսոփայական դաւանանքի, գեղեցկագիտական ըմբռնումի լիութեան մէջ նկատելով՝ յարգենք անոր հմտութիւնը, յարգենք անոր հեղինակութիւնը :

Աւելի պարզ բացատրելու համար այս կէտը օրինակս հայերէն պիտի չառնեմ, — օ՛, որքա՛ն հպարտ կ'ըզգամ

ինքզինքս, այս ճիգը ինձմէ խնայած ըլլալուս համար : Այսօր Փարիզի առաջին քննադատ-հրապարակագիրներէն մէկը ճանչցուած է պ. Օքտավ Միոպօ : Ամբողջ Ֆրանսական մամուլը օրուան նիւթ դարձուց՝ երբ ասկից քանի մը տարի առաջ պ. Միոպօ համբաւեց Մորիս Մէթէռլէնկ մը, նշանաւոր քանդակագործ մը, Ռօտէն, եւ գեղանկարիչ մը Գլօտ Մոնէ : Յրանսիսք Սարսէ (այսօր մեռած), ուրացուեցաւ այդ ատեն Միոպօյի դպրոցէն, ու հակառակ այդ հեղինակաւոր քննադատին պատկերացուցած խոշոր տաղանդին չվարանեցան զայն սիջակ մը ու իր քառասնամեայ գործունէութիւնը միօրինակ եւ որ եւ է գտիչ նկարագիրէ զուրկ համարել : Գտան նաեւ անոր մէջ քիչախնդրութիւն դէպի երիտասարդութիւնը, դէպի գեղեցիկը ու արուեստը եւ ատով բացատրեցին թատերական խաղերու վրայ իր ձեռք բերած գերակշիռ ազդեցութիւնը : Չափաւորակսն մը, սակայն, Յրանսիսք Սարսէ, իր ժամանակակից ընկերական կեանքի հանդամանքներու համաձայն քննադատ մը եղաւ : Չհետեւեցաւ մոլիտանդօրէն բնապաշտական դպրոցին եւ ոչ հլուօրէն տասնրութերորդ դարու հեղինակներուն, Տիտոնոյի, Աէնթ Պէօլի, եւն :

Եթէ հիմա անդրադառնանք մենք մեզի ու մտամիտփ հաշուի առնենք մեր մտաւորականութիւնը, այնքան ալ տարօրինակ պիտի չգտնենք, մեր մէջ, ճշմարիտ քննադատական ոգիին բացակայութիւնը : Ու ցաւալի է հաստատել թէ մեր այդ պակասը տեսնող յուսահատները, կ'ուզեն ծանրաբեռնել շատ անգամ որ եւ է մասնաւոր հրատարակութիւն այդքան դժուարին եւ այդքան պատասխանատու պաշտօնով մը, որուն թէեւ ամէն մարդ ձեռք կ'երկնցնէ :

Մխիթարական երեւոյթ մը պիտի համարուէր եթէ գոնէ ուսուցանելու պարզ ձգտումը ծաւալէր, առ այժմ, մեր պարբերական հրապարակագրութեան մէջ, առանց զանոնք լուրջ քննադատութեան փորձին մղելով՝ օր մը անձնասպան յուսախաբութեան վտանդին ենթարկելու :

Բայց պիտի ըսուի որ քննադատութիւնը լաւ թէ գէշ անխուսափելի երեւոյթ մըն է մամուլ մէջ . այդ ատեն ալ համեստութիւնը ունենանք գոնէ մեր մտածածը պարզօրէն եւ եղբայրաբար ըսելու, առանց խոշոր յաւակնոտութիւններով լուրջ եսամոլ մը եւ անհեթեթ ծիծաղելի մը դառնալու :

ՄՈԳ-ՊԵՏ

ՎԻՔՐՈՐ ՀԻՒԿՈ

II

(Շար. եւ վերջ, տես Հաւնադարսն՝ էջ 98)

Գրական Կեանք . — Բնագրական Զգումներ . — Մահր :

Վիքթոր Հիւկոյի քաղաքական ճշմարիտ գործունէութիւնը կը սկսի 1846էն : 1834ին արդէն իր կարծիքները, այդ մասին յայտնած էր, երբ կուտար իր «Պատասխանը պաշտօտանութեան գործի մը» եւ 1835ին Լա Փոէս (La Presse) օրաթերթին ծրագիրը կը կազմէր : Կը հաւատար թէ բանաստեղծը քաղաքական պաշտօն մը ունէր . բանաստեղծական ներշնչումը կը նմանցնէր վերին խղճմտանքի մը, անվրիպելի բնագրի մը, որուն ձայնը պէտք էր ծանուցանել տկարներուն իրենց իրաւունքները եւ զօրաւորներուն իրենց պարտականութիւնները :

Վ. Հիւկո իր քաղաքական գործունէութիւնը վարեց բեմախօսական անստգիւտ տաղանդով մը եւ իր արտասանած ձողերը նշանաւոր հանդիմացան բարձրագոյն խորհրդոյ (chambre haute) տարեգրութեանց մէջ : Բարձրացուց իր ձայնը ընկճուածներուն փոքաստ եւ պաշտպանեց հեղինակներու շահերն աւ իրաւունքները, որուն վոյթէն ոչ նուազ ձգտած էր :

1848ին, Օսլէականներուն հարստութիւնը յեղափոխութեան կործանելով, հանրապետական կառավարութիւն մը կը հիմնադրուէր : Վ. Հիւկո ժողովրդին ներկայացուցիչը կ'ընտրուէր : Այդ շրջանին է որ Հիւկոյի մէջ ազատական գրին իր բոլոր անսահման շունչը կը ծաւալէ : Ու պահպանողականները, որ զայն ընտրած էին, կատղեցան, երբ տեսան թէ «ընկերական պահպանողական» ոգին Վ. Հիւկո իրենցմէ բոլորովին տարբեր կ'ըմբռնէ : Իր ձայնին բոլոր կորովովը եւ իր տաղանդին բոլոր ճապճկութեամբ, Հիւկո հակառակ խօսեցաւ մահուան պատիժին եւ պաշարման դէմ :

1849ին Օրէնսդրական խորհրդին մէջ Փարիզի ներկայացուցիչը կը նշանակուի ու, միշտ հանրապետական սկզբունքները պաշտպանելով, կը մտածէ լուծել ընկերական

խնդրոյ գորդեան հանդոյցը, հաւատացած ըլլալով անոր կարեւրութեան. «Սա անոնցմէ եմ, կ'ըսէր, որ կը մտածեն ու կը յուսան թէ կարելի է թշուառութիւնը բառնալ:» Ազատ կրթութեան եւ հասարակական քուէի հարցը բարձրացուց ու աքսորանքի պատիժին բարձու մը պահանջեց:

Հանրապետութեան նախագահն էր, այդ ատեն, Լուի Նափոլէոն: Վ. Հիւկո, անոր մէջ թապաւորական ձգտումի ծածկուած ծրարքներ կռահեց եւ զանոնք երկրին ներկայացուցիչներուն մասնեց: Դաւադիր իշխանին դէմ իր բռնած անվստահութեան պիւքը արդարացուցին 1852 ղեկտեմբեր 2ի քաղաքական ղէպքերը:

Ի զուր Վ. Հիւկո կոչեր ուղղեց ժողովուրդին՝ անուանելով «գաւաճան»՝ սահմանադրութիւնը ռանակոխ ընող Նափոլէոնը: Ի զուր կողմեցաւ պառիսիսներու ետեւ՝ զինքը եւ իր կուսակիցները հալածող արքայականներու զինուորութեան դէմ: Ու երբ Վ. Հիւկո սպասեց իր կուսյ բուր ուժը, ստիպուած հեռացաւ Ֆրանսայէն եւ աքսորանքի մէջ փնտուց իր դէմ արտասանուած զգուելի վճռի մը ապաւէնը: Պրիւքսէլ ապաստանեցաւ նախ, ուր գրեց իր «Ոճիրի մը Պատմութիւնը» անուն գիրքը, որ այդ վերջին քաղաքական ղէպքերուն վրայ կը խօսուի: Ու այդ գրքի հրատարակութիւնը կ'ուշանայ ամբողջ 25 տարիներ. լոյս կը տեսնէ այն օրը, երբ ուրիշ Հանրապետութիւն մը՝ այս անգամ բարոյական դաւադրութիւններով սարքուած, քաղաքական նոր նոր շիթութիւններ կը սպառնար:

Պիլճիւրայի կառավարութիւնը խիստ գէշ վարուեցաւ Վ. Հիւկոյի դէմ, քաղաքական վտանգներ պատրուակելով. այնպէս որ Օգոստոս 5ին Վ. Հիւկո կը թողու Պրիւքսէլը, կ'անցնի Անգլիա եւ կ'ապաստանի Մանչի ծովուն մէջ գտնուող ժէրսէյ կղզիին մէջ:

* * *

«Թողլով իր հայրենիքը, ըսած է հեղինակ մը, Վ. Հիւկո, մէկն էր իր ժամանակի երեք կամ չորս մեծ բանաստեղծներէն. հոն վերադարձին մէկն է ան, ամէն դարու երեք եւ չորս բանաստեղծներէն: Այլեւս Լամաութիւններ, վիհնիներ եւ Միսէներ չէր որ կը գերազանցէր, այլ Հոմերոսներու, Տանթէներու եւ Շէյքսպիրներու շարքը կը բարձրանար»:

Աքսորի մեկուսացման կեանքը, արտաքին դէպքերու հետ չփոփոխուած դադարումը, ինքնամիտի բանաստեղծին մէջ՝ ներքին զարթնում մը յառաջ բերին, զարթնում մը՝ որ պիտի ցնցէր անոր բոլոր մտաւոր ուժերը եւ ներկայացնէր զանոնք իրենց բոլոր բնածին կարողութեաց փայլուն յատկութիւններովը: Ամբողջ 18 տարիներ վ. Հիւկո դիտեց ծովը, ու իր այդ խոկումի եւ անգործ հրապուրանքի ժամերուն, ներշնչուած ծովէն՝ անոր փրփուրէն եւ շղթայազերծ կատաղութենէն, իր ամէնէ սքանչելի գործերը արտադրեց:

1853ին իր «Պատիժները» հրատարակեց, երբ տակաւին ժէրսէյ կը բնակէր: Այս վերջին վայրէն կ'արտաքսուի սակայն Նափոլէոնի խնդրանքին վրայ՝ Անգղիոյ կառավարութեան հրամանով: Այս անգամ կ'ապաստանի Կէնըզէյ:

«Պատիժներուն» կը յաջորդէ իր «Մտահայեցութիւններ» հատորը, ուր բանաստեղծին առաջին բարկութիւնները նսեմացած էին կարծես, ոլկէանոսի խոշոր շունչին մէջ, ինչպէս ամպ մը փոթորկին մէջ:

Քանի մը ամիս յետոյ լոյս կը տեսնէ «Դարերու Առասպելը» անուն գործը, որով կ'ուզէ թափանցել հեռացած ժամանակին աղջամղջային գաղտնիքին՝ ու կը խոսի զայնդիտելով իր ամբողջ խաղաղ եւ խորին անշարժութեան մէջ:

Հայրենիքէն տարագրուած վ. Հիւկո համաշխարհաքաղաքացի մը կը դառնայ: Ծովերու վրայէն իր ձեռքը կը կարկառէր կարիպալտիներու եւ փոխանակ իր բազուկին՝ գրիչը անոր ի սպաս կը դնէր, գրգռիչ բանաստեղծութիւններ գրելով Նափոլէոնի եւ Պապին դէմ, որոնք կը ճնշէին Իտալիան, զանազան քաղաքական պատճառներով:

Նափոլէոն ներում կը շնորհէ արքայութեանը, բայց Հիւկո չուզէր օգտուիլ անկէ. ինչ որ ինքը դաւաճանութիւն մը կը նկատէր անկախ ոգիին դէմ եւ միայն անոր հետ կ'ուզէր մտնել իր սիրելի հայրենիքը:

Իր հոգիին ալքերէն եւ յուզուած սրտին խորքերէն դուրս կը բերէ դարձեալ, այն ահագնահատոր վիպասանութիւնը «Թշուառները», որ ամբողջ աշխարհին հիացման առարկան պիտի դառնար:

Հիւկոյի որդին, Թոմասուա կը թարգմանէ Շէյքսպիրը:

Ատոր հրատարակութենէն մէկ տարի առաջ, Վ. Հիւկո ամբողջ արձակ հատոր մը, իբր նախաբան անոր, «Ուիլիամ Շէյքսպիր» տիտղոսով, քննադատական ուսումնասիրութիւն մը հրատարակ կը հանէր: 1865ին կ'երեւին «Փողոցներու եւ Պուրակներու Երգերը»: 1866ին «Մովու Աշխատաւորներ» վիպասանութիւնը՝ նուազ ընդարձակ, սակայն այնքան կատարեալ եւ հզօր որքան «Թշուառները»:

1867ի Յուլյանդէսին, երբ ամբողջ աշխարհին առջեւ Փարիզի դռները կը բացուէին, Հիւկո ընտրեալ դրագէտներու խումբի մը դիմումին վրայ հաւաքաբար հեղինակուելիք գրքի մը առաջին էջերը կը շարագրէր: Փարիզի թատրոնները կը սկսէին իր գործերը ներկայացնել: «Հէռնանի»-ն Ֆրանսական թատրոնին մէջ կը խաղցուէր եւ «Ռիւ Պլասը» Օտէոնին: Ամէն կողմէ համակրական ցոյցեր կը տեղան դէպի տարագիր բանաստեղծը, ու հակառակ հոսանք մը կը ծագի, ճիշդ իր փամփանակին, կայսրութեան դէմ:

Յաջորդ տարին Վ. Հիւկոյի համար ցաւալի թուական մը եղաւ, կորսնցուց իր կինը եւ առաջին թողը: 1869ին նոր վիպասանութիւն մը կը գրէր, «Մարդը որ կը ծիծաղի», որ իբր թերթօն հրատարակուեցաւ «Լը Ռափէլ» թերթին մէջ: Այս թերթը հիմնած էին իր երկու որդիները, որուն կ'աշխատակցէին Հանրի Ռօշըֆօն, Օկիլեստ Վաքըռի եւ Փօլ Մէօրիս:

1870ին Նափոլէոն տեսնելով հակակայսերական հոսանքին զօրանալը, պատերազմին մէջ իր յաղթական փառքին պսակումը փնտռեց: Փրուսիոյ դէմ պատերազմը անյաջողութեանց մատնուեցաւ եւ սեպտեմբեր 4ի յեղափոխութիւնը դահընկեց ըրաւ բաղդախնդիր բռնապետը եւ բացաւ Վ. Հիւկոյի առջեւ հայրենիքին կարօտեալ դուռը:

Մերունին փակուեցաւ պաշարուած Փարիզին մէջ եւ հոկտեմբեր 20ին արդէն իր «Պատիժներ» գործը վերստին կը տպուէր եւ անկէ գոյացած հասոյթէն հեղինակի իրաւունքը երկու թնթանօթներ շինելու կը յատկացուէր:

1871ին կը հեղինակէ «Սոսկալի Տարին» որ Գուլյանի եղբայրասպան արարքին բարդուելը տեսաւ՝ երկիրը աւերըտըկող օտար արշաւանքներու եւ խժգժութեանց վրայ:

1874ին կը հրատարակէր «Իննսունը Երեք» վիպասանութիւնը, ուր Հիւկո իր քաղաքական հայեացքներու վրայ

կը ծանրանայ, Ամբողջ Փարիզը կը ծափահարէ զայն եւ 1875ին զինքը Ծերակոյտի անդամ կ'ընտրէ: Քանի մը ամսուան մէջ երկու հրատարակութիւններ, որոնք բանաստեղծին անցեալը ներկային կը միացնէին, իրարու յաջորդեցին, «Գործեր եւ Խօսքեր», «Ոճիրի մը Պատմութիւնը» (այս վերջինը Պրիւքսէլ, աքսորի մէջ եղած ժամանակ գրած էր, ինչպէս քիչ մը վերը ըսած ենք):

1877ին Հիւկո «Դարերու երկրորդ Առասպէլ»ին երկու հատորները կուտար եւ, երեք ամիս յետոյ, «Մեծ Հայր ըլլալու Արուեստը» ախղոսով գիրքը: 1878էն մինչեւ 1880 Վ. Հիւկո չորս բանաստեղծութիւններ գրեց, որոնք փիլիսոփայական դրութեան մը չորս մասերը կը կազմեն, «Պապը», «Գերագոյն Գութը», «Կրօնք եւ Կրօնքներ», «Բժամբտը»:

Վիքթոր Հիւկո խոր ծերութեան շրջանը արդէն բոլորովին թեւակոխած էր: Ինքնաբեր հոսանք մը կը սկսի եւ Վ. Հիւկոյի կենդանութեան կը տօնեն անոր ութսունամեայ յոբելեանը: Փողոց մը եւ հրապարակ մը Վիքթոր Հիւկոյի անունով կը յորջորջուին, ու բանաստեղծը կը պատասխանէ իրեն եղած պատիւներուն հրատարակելով միեւնոյն տարին «Մտային չորս հովեր» գործը, որով կենսունակ ուժերու իր մէջ տակաւին գոյութեան ապացոյցը կուտայ:

Տարի մը յետոյ կ'երեւի «Թօնքըմատա»ն, եւ իր կենդանութեան պատրաստած զանազան նոր գործերու անունները միայն կը յայտնուին, «Ազատ Թատրոնը», «Սաթանի Վախճանը», «Տեսնուած Բաներ», «Երկուրեակները», «Ճամբորդութեան ատեն», «Աստուած» * եւ այլն, որոնք իր մահէն վերջը միայն կը հրատարակուին:

* * *

Վիքթոր Հիւկո կը մեռնի 83 տարեկան երկու ամսուան եւ 26 օրուան հասակին մէջ, 1885 մայիս 23ին: Կը հեռանայ կիսնքէն ինչպէս ինք գուշակած էր «վարդերու եղանակին մէջ»: Իր մահը ազգային ընդհանուր վիշտ մը կը պատճառէ: Կը փակուին, այդ օրը, բոլոր պաշտօնական եւ ուսումնական վայրերը, նոյն իսկ Ակադեմեան: Մարմինը ամբողջ օր մը Շան զ'Էլիզէի յաղթական կամարին տակ ի ցոյց կը դրուի ու իր կտակին համաձայն, Վ. Հիւկո պարզ դապաղի մը մէջ:

առանց կրօնական արարողութեանց, — ըլլալով թէեւ իր վերջին բառովը Աստուծոյ հաւատացող մը, — կը թաղուի, Փանթէոնի հոյակապ տաճարին մէջ:

Ամբողջ ժողովուրդ մը կ'առաջնորդէ զինքը հոն. ու իր թաղման թափօրին վեհութեան չէ հաւատարած, ցարդ, նոյն իսկ կայսերական որ եւ է յաղթանակ:

III

Վիքտոր Հիւկոյի կենսագրականէն փաղուած յատկանշներ. — Վ. Հիւկո համալսարանային մարդը կը ներկայանայ. Իր ամբողջ կեանքը, բարոյական եւ մտաւոր գործունէութիւնը այդ խոտէալ տիպարին իրականացումին կը ձգտին: Շատ քիչեր եղած են որ այնքան դաղափար եւ այնքան թելադրականութիւն ձգած ըլլան ընդհանուր աշխարհի ընկերական կեանքին մէջ: Շատ քիչեր եղած են, դարձեալ, որ այնքան իմացական յարաբերական արժէք մը տուած ըլլան այն կեանքին, իրմէ առաջ: Վիքթոր Հիւկո ոչ միայն գուշակած է այլեւ զգացած է այն յարաբերութիւնը որ կայ խօսքին ու մտածումին մէջ: Ու մարդկութիւնը իր մութ խորհրդաւորութենէն օրուան մատնող արտաքին նշանները վերլուծելով՝ անոնց ամէնէ թափանցող, ամէնէ խորիմաց թարգմանը հանդիսացած է: Իրաւամբ հեղինակ մը ըսած է, — հակառակ անոնց որ Վիքթոր Հիւկոյի այս ընդհնմարումները գիպուածական գիւտի մը հետեւանք կը նկատեն, — «Ինչ որ մեծապէս նպաստած է Հիւկոյի իր վարպետէն, Շաթոպրիանէն, եւ իր մրցակիցէն, Լամարթինէն, առաջ մտնելու իրերու խորհրդաւոր էութեան մէջ, այդ տեսանելի բնութեան հանդէպ իր գիտելու ուժին կարողութիւնն է, ու, յետոյ, բնութեան իրեն ներկայացուցած պատկերներու վրայ իր անդադրուն խոկումը:»

— Աւելորդ է ըսել որ Վիքթոր Հիւկո յաջողած է այնքան իր արձակին՝ որչափ ոտանաւորներուն մէջ: Իր ժամանակի ֆլասիֆ (դասական) գլորոցը տաղաչափութեան սահմաններ դժած էր, որոնք կը պարտաւորցնէին մտածումը անոնցմով կաղապարուիլ: Վիքթոր Հիւկո բանաստեղծութեան մէջ այդ ներդաշնակող տարրը չի ջնջեց, բայց փոխանակ անփոփոխ եւ անբնական կանոնի մը ենթարկելու այդ ձեւը, կը ջանայ զայն մտածումին եւ պատկերին

թարգմանութեանը յարմարցնել: Յանգերու ազատութիւն հաստատելու ստիպուեցաւ, որովհետեւ իր մտածին պատկերներու բացառիկ զօրութիւնը չէր կրնար տոկալ որ եւ կաշկանդումի՝ արտայայտուելու համար:

—Վիքթոր Հիւկո եղած է Ֆրանսայի 19րդ դարու գրականութեան հայրը: Իր ազդեցութիւնը, իրօք, առասպելական անազնութիւն մը ունեցած է. նախ բանաձեւած է վիպականութիւնը ու յետոյ զայն բռնադատած է մտնելու ուղիի մը մէջ, ուրկէ քալեցին այնքան ցըրւած հանճարներ եւ այնքան արտադրող գրողէաներ: Իր դարուն մէջ՝ Ֆրանսական մտքին ճշմարիտ մարմնացումը եղաւ, աւելի քան Վոլթէո նախորդ դարու մէջ: Նորոգեց լեզուն, նորոգեց երեւակայութիւնը եւ ամբողջ յաջորդող սերունդը ստիպեց իր հետքերուն վրայ քալել: Ու հակառակ այն հոսանքին, որ 19րդ դարու վերջը սկսաւ երեւան գալ Վիքթոր Հիւկոյի գրական ձեւին դէմ, պէտք չէ մոռնալ շեշտելու որ նոյն իսկ այդ հոսանքը կը բղխէր Մեծ Բանաստեղծին արտադրած Գործին ծոցէն: Բնապաշտ զպրոցը անոր կը պարտի կեանքի ըմբռնողութիւնը եւ զայն իր բոլոր երեւոյթներով ճաշակաւոր կերպով ներկայացնելու արուեստը: Այնքան կարելի է ըսել Սեւկոյիսներու եւ Տեֆասաններու համար:

—Իբր գործի եւ կռուոյ մարդ, Վիքթոր Հիւկո յազթական հանդիսացաւ, Նափոլէոն Գ. ի դէմ իր մղած պայքարովը եւ իր ժամանակի իշխաններու կուրծքին իր տուած հարուածովը:

—Դարձեալ փիլիսոփայական ո՛չ նուազ գնահատելի նկարագիր մը վեր կը հանեն իր գործերը, ու անա Վիքթոր Հիւկո պաշտպան կը կանգնի աղքատին եւ հալածեալին ու աիպար հոգի մը կ'անձնաւորէ ներողամտութեան, գութի եւ զգացումի:

Մ. Պ.

ՎՐԻՊԱԿ. — «Համալսարան»ի 4րդ թիւին 103րդ էջին՝ տեսնելու եւ տեսնեմք տղերուն մէջ — պ. Վիքտոր տը Շաթօպրիանը, երբեմն նախարարապետ եւ անդամ Ֆրանսիայի Ակադեմիային — նախադասութիւնը ուղղել աշակես — պ. Վիքտոր տը Շաթօպրիանը, երբեմն պետական նախարար, եւ անդամ Ֆրանսական Ակադեմիային:

ՔԱՆԹԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՁԳԱՅՈՒՄ

(Դասախօսութիւն. պ. ԿԱՊՐԻԷՂ, ՍԷԱՅԼԻ, Փարիզի Համալսարանէն)

Տասնութերորդ գարու փիլիսոփաները գրական եւ անհերքելի ճշմարտութիւն մը կ'ընդունին թէ բանականութիւնը (raison) որ եւ է ազդեցութիւն չի կրնար ի գործ դնել կամքին վրայ: Բանականութիւնը կը ներգործէ կամ իրական առարկաներու եւ կամ գաղափարի յարաբերութեանց վրայ: Արդ, իրերն ու գաղափարները՝ այն ամէն պարագաներու մէջ երբ որ եւ է բաղձանք, որ եւ է հակազդեցութիւն (aversion) առաջ չեն բերեր, մեզի բացարձակապէս անտարբեր կը թողուն եւ չեն կրնար իբր գործողութեան պատճառ նկատուիլ: Բանականութիւնը կ'ուղղէ միայն հակամիտութեան արտադրած շարժումը: Ինչպէ՞ս ուրեմն կրնայ անիկա մեզ իրազեկ ընել այն միջոցներուն որոնցմով երջանկութիւնը ձեռք կը բերուի: Բարոյական սկզբունքները ուրեմն պէտք է կապուին զգայնութեան. բարիքն ու չարիքը պէտք է ըմբռնուին տեսակ մը մասնաւոր զգացողութեամբ: Կարելի է ըսել որ Քանթի տեսութիւնը ճշդապէս հակադատներն է (antithèse) այս վարդապետութեան: Բարոյագիտութիւնը սա բանաձեւին մէջ կը համառօտուի. — բանականութիւնը գործնական է: Իրօք, որպէս զի բարոյական գործ տեղի ունենայ, պէտք է որ մենք ամէն մասնաւոր նպատակէ հեռու մնայինք եւ մեզի ազատ զգայինք ամէն հակամիտութենէ, օրէնքի միայնակ գաղափարին մէջ մեր որոշողութեանց սկզբունքը գտնելու համար: Բայց, այդ վայրկեանէն, խնդիր մը կը ծագի: Եթէ բարոյական գործը միայն բանականութենէ որոշուած գործ մըն է, եւ եթէ միւս կողմէ բանականութիւնը եւ բնութիւնը բացարձակապէս անհամերաշխ են, ի՞նչպէս կրնայ կազմուիլ անոնց մէջ այն յարաբերութիւնը, որ գործի

հարկաւոր պայմանն է՝ փորձական (empirique) կամքի մը համար: Գիտենք թէ ինչպէս Քանթ այս դժուարութիւնը կը հարթէ: Մարդը, ասէն բանէ առաջ զգայուն էակ մըն է, անձնասիրութեան մատուած. ինքն է իր միակ նպատակակէտը, միայն ինքզինքը կը սիրէ: Ջգայուն մարդը չի գոհանար իր հակամիտութիւններուն հնազանդելով. զանոնք արգարացնելու ալ իր յաւակնի: Արդ, եթէ անձնասիրութիւնը այսպէս միջնորդաբար իբր օրէնսդիր կը ներկայանայ, կը դառնայ ինքնահաւանութիւն (présomption): Բայց միեւնոյն պարագային, բարոյական օրէնքի խղճմտանքը կ'արթննայ եւ այդ վայրկեանէն կռիւր, անհամաձայնութիւնը կը ծագի: Բարոյական օրէնքը կը ներկայանայ իբր հրամայողական, անբռնարարելի. չի հրամայեր այլեւս անհատականին, այլ համաշխարհականին, կտրուկ է ան: Այսպէս միեւնոյն խղճմտանքը կը ստորագասէ անձնասիրութիւնը եւ կը թաղէ ինքնահաւանութիւնը, որովհետեւ մէկ հարուածով հիմնայատակ կ'ընէ իրաւարար կանոնելու պէտքէն ծագած յաւակնոտութիւնը: Ջգայուն եւ բանական էակի մը մէջ, բարոյական օրէնքը անհրաժեշտաբար կը հակամարտի զգայնութեան, զայն հտ կը մղէ, զայն կը զսպէ: Ատկէ յառաջացումը դաժան զգացումի մը, ու զգայնութեան վրայ ներգործող այս բայասական ազդեցութիւնն է որ բարոյական զգացման մէջ կը կազմէ այն ինչ որ իրապէս զգայունն է: Բայց, առնուած այն յարաբերութեան մէջ, որ անոր առիթ կուտայ, բնութեան այս խոնարհումը խղճմտանքի յարգանքը կը դառնայ: Քանթի համար, բարոյական զգացումը՝ բնական զգացումէ մը անմասն է, մեզի բարոյական օրէնքին հնազանդութեան աանող բարձրագոյն հակումը չէ անիկա: Օտարոտի բնութեան՝ կը ծնի անիկա բարոյական օրէնքին զգայնութեան վրայ գործած բռնութիւնէն: Դարձեալ այս զգացումը ենթակայական, անհատական զգացում մը չէ. պատճառական է. բառին քանթական իմաստովը, այսինքն համաշխարհային: Կրնանք զայն սահմանել եւ ճանչնալ նախապէս, կը յառաջանայ, անխուսաբար, բանական եւ զգայուն էակի մը մէջ՝ բնական հակումներու հետ բարոյական օրէնքին անհամերաշխութիւնէն: Հեռու բարոյական սկզբունքները մատակարարակէ, կարելի է ըսել թէ անոնցմէ արտադրուած է, քանի որ բարոյական խղճմտանքին զարթնումին կը հետեւի:

Ահաւասիկ, իր էական գծերուն մէջ համառօտուած, Քանթի վարդապետութիւնը:

Կարելի է նախ ըսել որ Քանթ բոլորովին տրամաբանական է, երբ բարոյականութեանէն կը վանէ ամէն զգացում եւ ամէն հակամիտութիւն, ու կը մերժէ ճանչնալ բարձրագոյն միտում մը, ուր բնութիւնը եւ բանականութիւնը պիտի միանային եւ նախազգացնել տային այն խորին միակութիւնը որ զանոնք կը պարբիակէ: Քանթ զիպուածաբար չէ որ զգայնութիւնը կ'անտեսէ: Անտարակոյս, երբ կ'ընդունի թէ բանականութիւնը ինֆինիտաց (intuitive) է եւ մեզ էակը մատնանիչ կ'ընէ, հասկանալի է որ այդ կէտին մեղի կապող սէր մըն է որ կը պատասխանէ: Բայց այդպէս չէ Քանթի մտածումը. իրեն տեսակէտով, ընդհակառակը աստուածային իմացականութեան նմանելու ջանքը, այս աշխարհի գործերուն մէջ՝ անոր պատկերը նմանաբանելու համար, սխալիքներու (խորհրդաւորականներ) մտապատրանքն է: Բարոյական բարիքը Աստուծոյ պատկերը չէ. իբր թէ ճանչցուած կատարելութիւնը իրականացնելու մէջ չի կայանար: Եթէ կայ բարոյական մը, այդ կը նշանակէ թէ, ազատութեան հետ չփոթուող գաղափարով մը, բաւական է համաշխարհային օրէնսդրական ձեւը կասեցնելու զգայնութեան բոլոր թռիչքը: Այն վայրկեանէն երբ հակամիտութեան միջամտութիւնը կը թոյլատրենք, մենք կը դտնուինք բարոյականէն հեռու, որովհետեւ բնութեան կարգին մէջ կը գտնուինք, ու բարոյականին ու բնութեան մէջ որ եւ է նմանութիւն չկայ: Իր տեսութիւնը, ուրեմն բարձրագոյն զգայնութեան մը անկարելիութեան բացասութիւնն է որ ոչ այլեւս բացայայտ բանականութիւն մը պիտի բովանդակէ, այլ ինքնիմաց բանականութիւն մը: Զգայնութեան եւ պարզապէս վերացական օրէնքի մը մէջ՝ միտքը անկարող պիտի ըլլար որ եւ է առընչութիւն յղանալ:

Բայց հոն է որ Քանթ ինքն իրեն հետեւական ըլլալէ կը դադրի երբ անձամբ ենթարկուելով այն բարոյական աւելանին որ իր խոտակրօնութիւնը կը ներշնչէ եւ զայն կը կենդանացնէ, կը տարուի. գործնական բանականութեան ֆենադաւսուրթեան մէջ, մինչև դիմառնութիւններու եւ փոխաբերութիւններու: Քանթ անձնաւորութիւնը կը բարձրացնէ. ցոյց կուտայ միայն իր հոշակած օրէնքին հնա-

զանդող մարդը, եւ, օրէնսդրելով՝ միեւնոյն ատեն, բոլոր բանական էակները: Երբ Քանթ մարդկային անձը ինքն իր մէջը՝ նպատակ մը կ'ընդունի եւ անոր բացարձակ կամք մը կը շնորհէ, երբ կը խօսի իմացական աշխարհին վրայ, իբր թէ ան իրապէս գոյութիւն ունենար, եւ մեր առջեւ կը հանէ այն նպատակներու հանրապետութիւնը, — տեսակ մը մտաւորական անուանման ներգաշնակութիւն, ուր ամէն կամք անհունապէս կ'անդրադառնայ այն կամքերուն մէջ որ իրեն հետ կը միակցին, — իր բարոյագիտութեան մէջ՝ կը մտցնէ այնքան երեւակայութիւն, որքան զգացում: Օրէնքը կրնայ այն ատեն պատճառ մը դառնալ. բայց միայն այնուհետեւ բանաձեւն է այն իտէալ ընկերութեան որ պիտի իրականանար եթէ բոլոր բանական էակները զայն ընդունէին: Օրէնքը նոյն իսկ իրականացածի պէս է իտէալին գեղեցկութեամբ, որուն պայմանն է: Այս իտէալը պիտի դառնար այն ատեն մեր գործերու շարժառիթը եւ մենք պիտի ձգուէինք զգայուն կարգին մէջ: Սակայն, քանի որ Քանթ ո՛չ մէկ կողմ այս մեկնաբանութիւնը կուտայ, ներուած է ըսել թէ, իւրաքանչիւր անգամ երբ կարելի է իմացական աշխարհին ճշմարիտ իրականութիւն մը տալ, կը մոռնայ որ հոտ միայն ենթադրութիւնը գոյութիւն ունի եւ դուրս կ'ելլէ իր գրութեան արամագրութենէն:

Բայց խորհինք պահ մը Քանթի կերպւորութեան տեսակէտով եւ մեզի հարցնենք թէ անոր մտածումը դիւրաւուր է: Կրնա՞նք մենք մեզի ճշմարիտ հաշիւ մը տալ այն բանին վրայ՝ զոր Քանթ կ'անուանէ յարգանքի զգացում եւ հասկնալ թէ ի՞նչպիսի եղանակաւ բարոյական օրէնքը, զգայնութեան հետ հակասելով, փորձական կամեցողութեան համար շարժառիթ մը կը դառնայ: Բնութեան եւ բանականութեան, զգայնութեան եւ բարոյական օրէնքի անհամաձայնութենէն միթէ՞ յարգանքի զգացումն է յառաջագունէ ճանաչելի:

Բարոյական օրէնքը եւ զգայնութիւնը, յարաբերաբար, իբր հակառակ մեծութիւններ են: Օրէնքը կը ստորադասէ անձին սէրը, կը հակառակի զգայնութեան, այսպէս ոտնաձրգուած բնութիւնը կը վերագործէ ցաւալի զգացումով մը: Արդ, կը հասկցուի որ իր վրայ գործած այս ազդեցութեան կը պատասխանէ տեսակ մը խորհրդաւոր երկիւզ: Բայց

այսպէս չէ որ կ'ըմբռնէ Քանթ : Այն ստիպողութեան որ կը հակառակի զգայնութեան ու անոր թռիչքին՝ անբռնաբարելի օրէնքի մը գաղափարը, կը համապատասխանէ, ըստ իրեն, յարգանքի զգացումը : Բայց, Շոփէնհաուէր կը նշկատէ, որ լեզուի մէջ է որ այդ զգացումը յարգանք կը կոչուի : Այդ զգացումը, իրապէս, տեսակ մը հպատակութիւն է : Եթէ Քանթ զայն հպատակութիւն անուանած չէ, ծածկելու համար է կտրուկ հրամայականին ճշմարիտ սկիզբը, որ, վերջապէս, միայն բարձրագոյն օրէնսդրի մը կամքը կրնայ ըլլալ : Կարգ մը հրամայողով մը միայն կը հասկցուի. այդ յարաբերական խորհուրդ մըն է : Բայց հպատակութեան վրայ խօսիլ կը նշանակէ աստուածաբանական ենթադրութիւններ մտցնել պարսականութեան բարոյականութեան մէջ : Յարգանքի տեսութիւնը այդ ատեն վարդապետութեան մէկ խորունկ պահասութիւնը ծածկելու առաւելութիւնը պիտի ունենար :

Այս քննադատութիւնը թերեւս չափազանցուած է : Ինչ որ անհերքելի է, այն է որ, այս կէտին վրայ, Քանթի մտածումը բոլորովին հետեւական չէ ինքնիրեն հետ : Բնութեան եւ բանականութեան միջեւ, ոչ մէկ նմանութիւն կայ, ու ահաւասիկ ինչու համար կարելի չէ խօսիլ բարձրագոյն հակամիտութեան մը վրայ, որ պիտի տանէր մարդը բարոյական օրէնքի ինքնաբեր հպատակութեան : Ինչո՞ւ համար, այդ վայրկեանէն, եթէ բնութիւնը բռնաբարուած է օրէնքէն, նուաստացած է : Նուաստացումը կ'ենթադրէ համեմատութիւն մը, որ թոյլ կուտայ ճանչնալ այն էակին բարձրութիւնը որով մարդս խոնարհացուած է : Ի՞նչպէս յղանալ թէ արդեւքէ մը ծագող բացասական եւ ցաւազին զգացումի մը պարտի համապատասխանել յարգանքի դրական զգացում մը : Յարգանքը միթէ չ'ենթադրե՞ր իմացականութիւնը՝ անոր որ կը յարգուի եւ ինչպէս համակերպութեան հրաժարում մը : Ի՞նչպէս բնութիւնը օրէնքի դէմ ինքզինքը խոնարհած կը զգայ, եթէ արդէն բնութեան մէջ չկայ բան մը որ զայն կը պարտաւորէ օրէնքին գերակշռութիւնը ճանչնալու : Վերջապէս, Քանթի տեսութեան մէջ կը հասկցուի ճշդութեամբ թէ մարդը բաժնուած է կերպով մը երկու գոյութեանց, մտացածին ու վերացական գոյութիւն մը, եւ զգայուն ու թանձրացել գոյութիւն մը, կը հասկցուի նոյն իսկ որ մտացածին

կեանքը հետզհետէ իրական կեանքի կը վերածուի անարատ օրէնքին յարգանքին յառաջխաղաց գերակշռութեամբ : Բայց ի՞նչպէս այս երկու կեանքերուն մէջ կրնայ ներդաշնակութիւնը հաստատուիլ . ի՞նչպէս մէկը միւսին կրնայ ստորադասուիլ : Երկու կարգի իրականութեանց միջեւ ոչ մէկ համանման կէտ կը տեսնուի : Քանթի համեմատ , այդ յարգանքը չէր կարող գոյութիւն ունենալ :

Քննենք հիմա այն հարցը գիտնալու թէ ինչպէս օրէնքը կրնայ փորձական կեանքին համար շարժառիթ մը ըլլալ : Երբ օրէնքի գաղափարը կ'արթննայ խղճմանքին մէջ , զգայնութիւնը կանգ առած է եւ հակակռուած . օրէնքին գաղափարը կ'ընկերանայ զգայնութեան վրայ ներգործող այդ ազդեցութեան : Բայց ի՞նչպէս այդ հարկադրողութեան բացասական զգացումը կը ձեւափոխուի դրական զգացումի մը որ օրէնքին գաղափարովը կարող կ'ըլլայ փորձական կամքին համար շարժառիթ մը կազմել : Բնութիւնը միթէ՞ խոչընդոտ մըն է բարոյական օրէնքին : Այդ վայրկեանէն , օրէնքին գործը գիւրացած է այն միջոցին (mesure) մէջ , ուր բնութեան դիմադրութիւնը նուազած է : Եթէ զգայնութիւնը ճնշուած է , արգելքը հա կը մղուի կերպով մը , ու կարելի կ'ըլլայ ըմբռնել որ ծայրայեղութեամբ այդ դիմադրութիւնը կ'ոչնչանայ : Բայց , եթէ չենթադրուի օրէնքին մէջ սեփական ուժ մը՝ կանգնում անշարժութիւն տեղի պէտք էր ունենալ . շարժում գոյութիւն պիտի չունենայ : Օրէնքը , ճնշելով զգայնիկ հակամիտութիւնները , կրնայ պատճառ մը , շարժառիթ մը դառնալ , այն ենթադրութեան մէջ , ուր օրէնքը պիտի ունենար արդէն դրական ուժ մը , բայց , եթէ օրէնքը ինքնին շարժառիթ մը չէ , զայդ երբեք պիտի չլինի : Ի՞նչպէս , այն միակ պատճառով որ զգայնութիւնը կաշկանդուած եւ արգիլուած է բնական օրէնքէն , կրնայ ծագիլ որ անիկա օրէնքին ուղղութեամբը մղուի : Ի՞նչպէս , ուրիշ խօսքով , օրէնքին բացասական գործը , որ զգայնութեան վրայ կը ներգործէ , կը փոխուի դրական գործի :

Անտարակոյս , կրնայ պատասխանուիլ որ օրէնքի գաղափարը կապուած է զգայնութեան վրայ ազդող արգելքին : Բայց այն ատեն , կամ լաւ եւս , այդ զուգորդութեան շնորհիւ , այն զգացումը՝ որ կը ծագի օրէնքին զգայնութեան վրայ ըրած ներգործութենէն , կ'անդրադառնայ նոյն իսկ զգայնութեան

վրայ, ու այդ զգացումը յարգական երկիւղի ակտաբանական զգացում մըն է: Դարձեալ, Քանթի տեսութեամբ, բարոյական զգացումը կապուած չէ հաճոյքի կամ վիշափանիկա զուտ կերպով մտաւորական է, ու այն ատեն ի՞նչպէս այդ զգացումը միջնորդ մըն է բանականութեան եւ զգայնութեան միջեւ, ի՞նչպէս թոյլ կրնայ տալ ըմբռնել թէ օրէնքը շարժառիթի մը կը փոխուի: Բոլորովին մտաւորական զգացումի եւ զգայնութեան մէջ այնքան հեռաւորութիւն կայ որքան բարոյական օրէնքի գաղափարին եւ զգայնութեան: Ազատութեան խորհուրդին մէջ միթէ՞ պիտի ապաւինինք, որուն շնորհիւ բաւական պիտի ըլլայ համաշխարհային օրէնսդրական ձեւով մը զմեզ պատճառաբանելու: Բայց այս կէտին մէջ հանելուկը միեւնոյնը չէ: Ի՞նչպէս այն էակին մէջ, ինչ որ մենք կենք, այսինքն բանական եւ զգայուն, օրէնքի գաղափարը կրնայ գործողութեան շարժառիթ մը դառնալ: Քանթ չի յաջողիր բացատրել թէ ի՞նչպէս բարոյական օրէնքը կրնայ սահմանել փորձական կամքը՝ ծնունդ տալով բարոյական զգացումին: Նախ, զգայնութեան եւ բանականութեան անհամերաշխութենէն, յարգանքի զգացումը անհրաժեշտաբար չի հետեւեալի. ու միւս կողմէ, այն միակ բանովը թէ զգայնութիւնը ճնշուած է բարոյական օրէնքէն, չի հետեւիր թէ օրէնքը զգայնութեան վրայ դրական ազդեցութիւն մը ունեցած կը գտնուի, եթէ օրէնքը ինքնին արդէն անկարող է փորձական կամքին վրայ ազդել: Բայց այն ատեն ի՞նչի պիտի ծառայէր յարգանքի զգացումը:

Կրնանք, հիմա, հանելուկը ինքն իր մէջ քննել, ու մեզի հարցնել՝ թէ կողմնակիօրէն արտաքսելով բարոյական կեանքի ամէն զգացում՝ արդեօք պահանջել ըսել չէ՞ որ այդ կեանքը մարդկային կեանքի պայմաններէն իսկ դուրս ըլլայ: Հոգեբանական տեսակէտով, ճիշտ է ըսել թէ մարդը կրնայ ինքզինքը սահմանել զուտ գաղափարներով, առանց զգայնութեան միջամտութեան: Արդէն Շոփէնհաուէր կ'ամբաստանէր Քանթի բարոյագիտութիւնը իրականութենէ եւ հզորութենէ անմասն ըլլալուն. «Բարոյականը, կ'ըսէր, մտորուն իրական ընթացքին հետ գործ ունի, ի՞նչ կ'ընեն անոր՝ բոլոր այս թղթեայ գղեակները, յառաջագունէ:» Շոփէնհաուէրի համաձայն, մեր վճռականութեանց ճշմարիտ շարժառիթը զգայնական նկարագիր ունեցող շարժառիթ

մըն է, գութը: Քանթ, անձամբ, քարտերու քննականցաւ-
նութեան մէջ, կ'ընդունի որ բարոյական գործ մը երբեք
կատարուած չըլլայ թերեւս այս աշխարհի մէջ. այդ ճշմար-
տապէս բարոյական գործը պիտի ըլլար այն՝ որուն պատ-
ճառները բաւական գտուած պիտի ըլլային որպէս զի
չի մնար որ եւ է զգացումի հետք: Բայց այսպէս յղացուած
գործ մը միթէ՞ անխրականալի վերացականութիւն մը չէ:
Ժամանակակից հոգեբանները՝ այս կէտին վրայ, համաձայն
են տասնութերորդ դարու անդդիացի բարոյագէտներուն
հետ. ծանօթ է արդէն թէ որքան շատ գաղափարը վերա-
ցական է եւ հեռացած պատկերէն, այնքան նուազ ազդեցիկ
է: Կաւֆի Հիւանդութիւններուն մէջ, պ. Ռիպո ցոյց կուտայ
թէ, եթէ զգայնութիւնը տկարանայ, պատճառը գաղափարի
կը փոխուի, այլևս չի գործեր, եւ Տիարախանութիւն կայ,
— il y a aboulie, — անհատը կը դառնուի այն ցաւազին
վիճակին մէջ, ուր ինքզինքին կը ներկայացնէ գործը
ու անոր կարելիութիւնը կը ճանչնայ, բայց իր մէջ հար-
կաւոր թռիչը չի զգար զայն կատարելու համար: Կը թուի,
իրօք, որ գաղափարը գործողութեան սկզբունք մը չի գառ-
նար՝ առանց զգայուն տարրերու հետ ձուլուելու: Անտա-
րակոյս, կարելի է պաշտպանել թէ բարոյական կեանքի
յառաջգիմութիւնը, վերջին վերլուծութեան մը մէջ, կը
դատապարտուի ճիգի մը՝ տալու համար գաղափարին առա-
ւելութիւն մը զգայուն ծաւալումին վրայ: Բայց
միթէ այս ալ՝ շնորհիւ կարգ մը զգայնիկ շարժառիթներու,
որոնք կը համապատասխանեն մեր վերացական գաղափար-
ներուն, բարձրագոյն զգայնութիւն մը ստեղծելու եւ զմեզ
սահմանելու համար, ճիգ մը չէ՞: Երբ գաղափարը կը սահ-
մանաւորուի պարզ վերացականութեան մը մէջ՝ անգործ կը
թուի: Իրական կեանք չունի, կապուած չէ մեր միւս գա-
ղափարներուն ամբողջութեան, ու թերեւս նոյն իսկ կրնայ
անոնց կապուիլ՝ խառնուելով միայն կեանքի շարժումին
զղացում դառնալու համար: Յաւակնիլ գործելու վերացա-
կան գաղափարի մը համաձայն, հակասական է մարդուն
բնութեան հետ: Պէտք է որ գաղափարը գործօն ըլլայ,
կազմաւորէ ներքին տարրերը տեսակ մը դրութեան մէջ,
ու այս կազմակերպութիւնը ընկերանայ կարգաւոր, ներ-
դաշնակ բարձրագոյն զգացումով, որով կը բացատրուի բոլոր

այս տարրերու համերաշխութեամբը: Բարոյական կեանքը բարոյական դադափարին հակամիտութեան վրայ տուած դերակշռութեան մէջ կը կայանայ, բայց օժտելով դադափարը ներքին կեանքով մը որ անով ազդու ուժ մը կը յերիւրէ: Այսպէս է որ արդարութեան գաղափարը չի վերածուիր նոյնութեան սկզբունքին, Ա = Ա ի: Միայն վերացական գաղափար մը պիտի ըլլար: Բայց հարստացնենք այս գաղափարը, շինենք այս պարզ բանաձեւով արդէն ապրած փորձառութիւններու բազմութեան մը համառօտութիւնը, այն աստիկ անիկա հզօր ու ազդեցիկ պիտի դառնայ: Միւս կողմէ, եթէ հարցաքննուի պատմութիւնը, կը տեսնուի որ, ամէն անգամ երբ փափաքուած է գաղափարի մը գործնական ուժ մը տալ, զայն թարգմանած են պատկերներով, որովհետեւ պատկերը իրապէս կապուած է զգացումին: Ամէն անգամ որ գործնական բարոյագիտութիւն մը կամ փիլիսոփայութիւն մը կը հիմնուի, չի գոհանար անիկա վերացական սկզբունքներ եւ տեսական ճշմարտութիւններ բանաձեւելով: Կրօնքներու մէջ միեւնոյն օրէնքը կը յայտնուի, զգացումը եւ իմացականութիւնը միացած: Ըստ ինքեան, Աստուծոյ բնութիւնը մարդուն բնութիւնն է, եւ աստուածային նմանութեան իբր կենդանի օրինակ կուտան մարդ-Աստուծոյ մը նմանութիւնը. կը հաստատեն հոյն իսկ միջնորդներ այդ իսէալին եւ մարդու բնութեան միջեւ, ինչպէս, օրինակի համար, բոլոր սուրբերու շարքը, այնքան պատկերներ եւ խորհրդանշաններ որ մեզի կ'օգնեն մերձենալ գերադոյն գաղափարին: Կը թուի սուրեմն թէ, հոգեբանական տեսակէտով, Քրիստոսի վարդապետութիւնը չի համապատասխաներ մարդկային բնութեան եւ գործունէութեան օրէնքներուն:

Բարոյական տեսակէտով, միթէ՞ օրինաւոր է վանել հակամիտութիւնները եւ նկրտումները: Յաճախ քննադատուած է խստօրէն Քրիստոսի բարոյական կեանքի զգացման՝ այս մերժումը, իբր նորասիրութիւն մը: Ռիպոյի նման հոգեբաններ կը պնդեն թէ մարդ մը միայն ճշմարտապէս բարոյական է եթէ բարոյականութիւնը իրեն մէջ բնութիւն եւ բնազդ դարձած է: Բայց ենթադրել թէ բարոյական զգացումը բնազդի փոխուած է, միթէ՞ ենթադրել ըսել չէ թէ այլեւս բարոյական չկայ, քանի որ խորհրդածութիւնէն կը

հեռանանք, ու այլեւս կարելի պիտի չըլլար հոն յաջորդու-
թիւն եւ ընտրութիւն ունենալ: Միայն կը մնան այլեւս
կարգ մը անհատական եւ ընկերական պէտքեր, որոնք միա-
դրուած են միջավայրին յարմարուելու անհրաժեշտութենէն:
Արդ, ինչ որ կը կազմէ բարոյականը, այդ է ճշգրտագէտ մար-
դուն յատկութիւնը, երբեք մինչեւ բնազդը չի նուաստանալ
բայց եթէ այն ատեն երբ բնազդաբար դադափար մը իրակա-
նացնելուն հասած է, գործածելով այդ գաղափարը նոր գիւտի
մը համար: Ինչ որ կը յատկանշէ զայն իր բանականութիւնն
է, իր յարաբերութիւնները բազմապատկող կարողութիւնն
է: Մարդը բարոյական է որովհետեւ կը գործածէ այն՝ ինչ
որ իրականացուցած է իբր պայման՝ բարձրագոյն իտէալի մը
համար: Եթէ չունենար այդ գտողութեան միտքը, երկար ատե-
նէ ի վեր իր սահմանափակուած պէտքերը զայն կըլլած պիտի
ըլլային կարգ մը անփոփոխ գործերու մէջ: Բայց միթէ՞ այս
բանը կը նշանակէ թէ պէտք է բարոյականէն ամէն հակամի-
տութիւն վանել: Եիլլէն բողոքած է Քանթի այս տեսութեան
դէմ սա խօսքերով. «Յօժարակամ ծառայութիւն կը մատուցա-
նեմ բարեկամներուս. դժբաղդաբար, այդ բանը հակամիտու-
թեամբ կ'ընեմ, ու կը չարչարուիմ առաքինի չըլլալուս հա-
մար » Ահաւասիկ ինչպէս Քիւնո Թիչէն քանթական տեսու-
թիւնը կը պաշտպանէ: Քանթ չ'ուզեր անտարակոյտ որ մենք
պարտականութիւնը յօժարակամ կատարէինք, այսինքն հա-
կամիտութեամբ: Բայց կատարել զայն դժկամակութեամբ,
չբարձեալ հակամիտութեան համար մաս մը հանած կ'ըլլանք:
Ուրեմն, եթէ Քանթ կ'ուզէ որ օրէնքը գործադրուի գաղափա-
րին միակ ազգեցութեան տակ, չ'ուզեր որ զայն գործադրուի
սրտին հակառակ, ինչ որ պիտի նշանակէր, ուրիշ եղանակա-
մը, զգացումը մաս ընդունիլ բարոյականութեան մէջ: Ուզած
է միայն բարոյական պատճառը պաշտպանել իր բոլոր
անարատութեան մէջ:

Այս փաստացիութեան կարելի է պատասխանել, ամէն-
քին խոստովանութեամբ, թէ բարի հակամիտութիւններ
կան, այսինքն հակամիտութիւններ որ կը կատարուին օրէն-
քին պահանջումներուն համաձայն: Արդ, ենթադրեցէք որ
անհատ մը օժտուած ըլլայ այնպիսի բնութեամբ մը, տե-

սակ մը ինքնաբեր շնորհալիութեամբ, որ հակամիտութիւնները համաձայնին միշտ բարոյական օրէնքին պահանջումներուն հետ, ատով իսկ օրէնքէն դուրս գանուած պիտի ըլլար: Օրէնքը կը դիմագրէ զդայնութեան, զայն կը տկարացընէ. արդ, այս դիմագրութիւնը կ'ընկերանայ ցաւագին զգացումի մը, ու կեղծ չէ ըսել, ինչպէս Շիլլէո, թէ, առաքինի ըլլալու համար, բնութեան հարկաւոր է որ եւ է հակառակութիւն մը: Ընդդիմութիւն մը: Արդ, տապալուած թըշնամին, կը յաւելու, կրնայ միշտ վերականգնիլ, հաշտուած թշնամին է որ միշտ յաղթուած է: Մարդուն ճիշդ պէտք է ըլլայ ինքն իրեն հետ հաշտուիլ, միացնել բնութիւնը բանականութեան Բարոյական տեսակէտով, մարդկային բնութեան կրկնակ ձև մը կայ, կռուի եւ շնորհի ձեւերը, ուր բնութիւնը հպատակած է եւ կը հնազանդի ինքնիրմէն բանականութեան: Արդէն, արհեստին մէջ, յուզումը բոլորովին ներգաշնտկութեամբ թափանցուած է, ու իմացականութիւնը տակաւ առ տակաւ կը յառաջանայ այդ յուզումէն որ զայն կը պարուրէ: Միեւնոյն բանը կը պատահի բարոյականութեան մէջ: Հակամիտութիւններ կան որ աւելի նպաստաւոր են, քան թէ ուրիշներ, օրէնքի կատարումին, այս միթէ ապացոյց մը չէ՞ թէ բնութիւնը եւ բանականութիւնը նուազելի չեն, թէ կարելի է բնութեան մէջ բարոյականին օժանդակ մը գտնել: Ի՞նչպէս կրնայինք լաւ հակամիտութիւններու մասին խօսիլ, եթէ արդէն բնութեան մէջ չլինէր, բարիքի նախըզպացում մը, տեսակ մը շնորհ՝ թոյլ տալով մարդը ինքնիրեն հետ հաշտեցնելու:

* * *

ԲՈՒՍԱԿԵՆՍԻԿՆԵՐ

ԵՒ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

(Bactéries & maladies contagieuses)

(Դասախօսութիւն փրօֆէսէօր ՏԱԿԻՅԼՕՆԻ, Փարիզի
Գիտութեանց Համալսարանին մէջ)

II

Տիֆթեռիի ժահրին սխարացումը. Պատուաս. — Աւերկոու-
նակութեան բնախօսական մեքենականութիւնը. —
Տիֆթեռիին բուժումը եւ Շիճկաբուժութիւն

Տիֆթեռիի ժահրին սխարացումը. Պատուաս. — Ինչպէս
տեսանք ¹⁾, պ. պ. Ռուբի եւ Եէրսէնի գեղեցիկ աշխատու-
թեան շնորհիւ, տիֆթեռիին միքրոպական եւ մակարու-
ծական նկարագիրը պարզօրէն բնորոշուած էր. դարձեալ
անոր պատճառագիտութիւնը (étiologie) բաւական ճանչցուած
էր մատակարարելու համար յստակ ծանօթութիւններ ախ-
տարգեղութեան (prophylaxie), — այս բառով կ'որոշին ամբող-
ջութիւնը այն ամէն միջոցներուն, զոր կարելի է գործա-
ծել վարակիչ հիւանդութեան մը տարածումը խստօրէն
համար: Բայց ախտարգելական այս նախզգուշութիւնները,
որոնք առողջապահութեան հասողութեան մէջ կը գտնուին,
անկարող կ'ըլլան՝ այն վայրկեանէն՝ երբ հիւանդութիւնը
կը յայտնուի: Պէտք էր ուրեմն փնտռել միջոց մը, որով
կարելի ըլլար արհեստականօրէն կենդանիները անընդու-
նակ դարձնել տիֆթեռիին, որուն անոնք բնական կերպով
զգայուն ընդունակութիւն մը ցոյց կուտան:

1890 թուականին Քառլ Ֆոէնքէլ կը գիտէ որ երեք
շաբթուան մշակումէ մը պոյացած տիֆթեռիի խիստ ժահ-
րային թոյնը երբ տաքցուի 60° եւ 70° աստիճաններու
մէջ, կը կորսնցնէ խոշոր մաս մը իր ժահրային ուժէն:
Եթէ սկարացած ժահրը ներարկուի հնդկախողի մը, խիստ
թեթեւ խանգարումներ առաջ կը բերէ, ու երբեմն նոյն իսկ

¹⁾ Տես, Հանաչաւարան Կրդ թիւ էջ 109. այս դասախօ-
սութեան առաջին մասը:

որ եւ է գործարանաւորական անկարգութեան տեղի չի տար : Բայց եթէ յետոյ, այս գործողութեան ենթարկուող կենդանիին բնական թոյն մը ներարկուի, որ կարող է զայն սովորական պայմաններու մէջ մեռցնել, գործարանաւորութիւնը անոր բուրոլլին անզգայ կը ներկայանայ : կենդանին, ուրեմն, բացարձակապէս, անընդունակ դարձած է տիֆթէռիին . տկարացած ժահրը, որ անոր ներարկուած է, պատուաստ մը կը կազմէ : Դիտել տանք, սակայն թէ, որպէս զի պատուաստումը ազդեցիկ ըլլայ, հարկաւոր է առնուազն տասնըչորս օր սպասել, ժահրային ներարկում մը ընելէ առաջ :

Պ պ. Ռու եւ Վայլար եւս, ուրիշ մեթոտով մը, ստացան տիֆթէռիի ժահրին տկարացումը . փորձով հասկցան որ քիչ քանակութեամբ իօսի յաւելումը՝ մշակութեան մասջուրին վրայ, թոյնին ժահրային կարողութիւնը ըզգալապէս կը տկարացնէր :

Վերջապէս, պ պ. Պէհրէնկ եւ Ուէրնիքէ, գերմանացի, առաջարկեցին մասջուրին փոքրաքանակ թոխթոխոն s'իօսի յաւելումը :

Երբ ժահրային մշակում մը, որ ցպիկներ կը պարունակէ, կը ներարկուի նախօրօք պատուաստուած կենդանիի մը մորթին տակ, կը տեսնուի շուտով, ներարկման կէտին շուրջը, կազմուիլը կոչլոռի (plaque de necrose) մը, որուն տակ ցպիկը երկար ատեն կենդանի կը մնայ . ուրեմն պահպանիչ պատուաստը՝ ցպիկէն գործարանաւորութեան մէջ տարածուած թոյնին վրայ է որ կը յարձակի եւ ոչ թէ իսկապէս ցպիկին վրայ :

Անընդունակութեան բնախօսական մեխանիսմները. — Ի՞նչ է անընդունակութեան բնախօսական մեքենականութիւնը, որ արհեստական կերպով պատուաստուած գործարանաւորութեան կը հազորդուի : Բազմաթիւ տեսութիւններ եղած են պատասխանելու համար այս հարցումին : Ահաւասիկ այն տեսութիւնը, որ՝ ներկայիս մէջ ընդունելու համար, ամենէ բնականը կը թուի : Այն ցպիկը որ կը յարձակի գործարանաւորութեան վրայ, կ'արտադրէ, գիտենք, թոյն մը . ենթակայ գործարանաւորութիւնը անոր կը պատասխանէ թոյնին ազդեցութիւնը չէզոքացնելու կարող նիւթի մը արտադրութեամբ, հակաթոյնով մը, մէկ խօսքով : Երբ գործարանաւորութիւնը կը տրամադրէ բնա-

կան անընդունակութիւնը՝ հիւանդութեան դէմ, կը նշանակէ որ ինքն իրմէն կ'արտադրէ, եւ առաջին յարձակումին, բաւականաչափ հակաթոյն, ոչնչացնելու համար թոյնին ազդեցութիւնը: Պարզ պատուաստով մը կամ յաջորդական պատուաստներով, կը ներմուծուի գործարանաւորութեան մէջ տկարացած թոյն մը, այսինքն նուազ ժահրային քան թէ բնական թոյնը, ու գործարանաւորութիւնը կը մղուի հետզհետէ արտադրելու հակաթունահան յարաճուն քանակութիւն մը, որ՝ ժամանակ մը վերջ, բաւական կ'ըլլայ բնական թոյնի մը ներմուծումը հզօրապէս անկարող դարձնելու: Բայց որո՞նք են հակաթոյնին արտադրիչ գործօնները: Պատասխանը, որ այսօր կը թուի ընդհանուրին շնորհին արժանանալ, տրուած է այն տեսութեամբ, որուն պ. Մէչնիքօֆ իր անունը կցած է:

Վիտէնք որ արիւնը կը պարունակէ մեծ քանակութեամբ կարմիր գնդիկներ (hématies) եւ փոքրիկ քանակութեամբ սպիտակ գնդիկներ (leucocytes կամ amibocytes): Ճերմակ գնդիկներն են որ պիտի արտադրեն, ամէն վայրկեան, հակաթոյնին հարկաւոր քանակութիւնը, թոյնին ազդեցութիւնը տկարացնելու համար: Անոնք են դարձեալ, որ պատուաստումի շրջանին մէջ, պիտի մղուէին արտադրելու անկէ՝ յարաճուն քանակութեամբ եւ վերջ ի վերջոյ պիտի շնորհէին՝ իրենց պատկանած գործարանաւորութեան՝ անհրաժեշտ անընդունակութիւնը: Այսպէս ճերմակ գնդիկները պիտի ներկայանային գործարանաւորութեան բնական պաշտպանները՝ անոր վրայ յարձակող բուսակենսիկներուն դէմ:

Այս տեսութիւնը ընդունելի կը նկատուի որովհետեւ միջբրոպական հիւանդութիւններու մէջ՝ ախտածին բուսակենսիկը, փոխանակ իր թափանցումի կէտին չուրջը տեղաւորուած մնալու, ամբողջ գործարանաւորութեան մէջ կը վարակուի:

Յաճախ, այս պարագային մէջ, տեսնուած է որ ճերմակ գնդիկները կը կռուին թշնամիին հետ մարմին առ մարմին պլլուած, ճերմակ գնդիկ մը, մերձակայ բուսակենսիկի մը արտաթորումներէն ազդուած, կ'ուղղէ դէպի թշնամին կենսահիւթային երկարաձգումներ, անկատոն ձեւով, այս վերջինները կը յաջողին բուսակենսիկը աւրողջովին շրջապատել, պատանքել, որ յետոյ կը մտցուի

ճերմակ գնդիկին ծոցը, որ զայն կը մարսէ եւ կը վերջացընէ, ճերմակ գնդիկը, մէկ խօսքով, «կ'ուռէ» բուսակենսիկը: Ասկից «ուտող բջիջ» կամ ֆալոսիթ (phagocyte) անունը զոր կուտան ճերմակ գնդիկներուն — յօֆոսիթ —, այդ յատկութիւնը ցոյց ապու համար. ասկից դարձեալ «բջջակերութիւն» կամ ֆալոսիթոզ անունը, զոր կուտան ճերմակ գնդիկին կատարած բուսակենսըկային մարսողութեան: Երբ բուսակենսիկը, փոխանակ ամբողջ գործարանաւորութեան վրայ յարձակելու, հեռուէն կը ներգործէ այն թոյնով, զոր կ'արտադրէ եւ կը ծաւալէ, ինչ որ կը պատահի տիֆթէռիին ատեն, մղուած են, նմանօրէն ենթագրեւ թէ ֆալոսիթներն ալ կը գործեն, բայց տարբեր եղանակաւ մը, պարզապէս արտաթորելով թոյներու ազդեցութիւնը հակակշռող նիւթեր:

Տիֆթէռիին դարմանը եւ Ծիւնկարուժուրիւն. — Տիֆթէռիին մասնաւոր ուսումնասիրութեան վերադառնալու համար, գիտենք այժմ թէ ինչպէս պ պ. Ֆոէնքէլի, Ռուի, Պէրէնկի խուզարկութիւնները թոյլատրեցին ձեռք բերել զանազան մեթոտներով, կենդանական գործարանաւորութեան պատուաստումը, ընդդէմ տիֆթէռիին: Բայց բոլոր այս եղանակները անգործադրելի էին մարդկային տիֆթէռիի պահուն. պատուաստումը, իրօք, կը պահանջէ բուսական ժամանակ, որպէս զի գործարանաւորութիւնը վարժուի թոյնին, ու այդ ժամանակը խիստ շատ է հիւանդութեան բարեշրջութեան բնական տեւողութենէն. մահը վրայ պիտի հասնէր ուրեմն անմիջաբար, պատուաստումի ներգործութենէն առաջ: Տիֆթէռիին բուժող եղանակ մը պէտք էր պահել ուրեմն:

Այս շաւղով, Ֆրանսայի մէջ բոլորովին նոր մեթոտ մը ձեւած էր, վստահիչ հիւանդութիւններէն ոմանք դարմանելու համար: Այս մեթոտին սկզբնակէտն է, իրօք, պ պ. Ռիչէէ եւ Հերիքուրէ 1888ին կատարուած փորձ մը որ, առաջին անգամից, կը թուի ոչ մէկ կերպով շահագրգռել տիֆթէռիին դարմանումը:

Մասնաւոր փաարիւնութիւն մը (septicémie) պոյութիւն դուրս, — արդիւնք սրաֆիլոբիւս փիոզեփիփիւս կոչուած բուսակենսիկին, — որ կը յարձակի ճագարին վրայ եւ անմիջապէս մահ առաջ բերէ, մինչդեռ շանը վրայ միայն տեղական խիստ թեթեւ վէրքերու առիթ կուտայ: Պ պ.

Ռիչէ եւ Հէրիքուր մտածեցին ճագարին շրջանառական գործարանին մէջ շան արիւն ներմուծել, յետոյ այս գործողութեան ենթարկուած ճագարին ներարկելով սթաֆիլոքոքի զուտ մշակում մը՝ հաստատեցին որ կենդանին անընդունակ դարձած էր փոտրիւնութեան, դարձեալ, նշմարեցին որ ձեռք բերուած անընդունակութիւնը աւելի կատարեալ էր, երբ շունը, որ կը հայթայթէր հարկ գատուած արիւնը, նախապէս ներարկուած էր սթաֆիլոքոքի մշակումով մը:

Այս արեան փոխանցումի մեթոտը յետոյ, շատ թէ քիչ յաջողութեամբ, գործադրուեցաւ ճագարին հիւժախտին դարմանումին մէջ՝ շան արեան փոխանակութեամբ, որ այդ հիւանդութեան խիստ անընդունակ է. վերջ ի վերջոյ մարդկային հիւժախտի դարմանումին մէջ՝ այժի արեան փոխանակութեամբ: Բայց ինչ որ ալ ըլլայ ձեռք բերուած արդիւնքներու արժէքը, պ. պ. Ռիչէի եւ Հէրիքուրի փորձը մէկման կէտը պէտք էր ըլլալ մեթոտի մը քիչ մը տարբեր եւ խիստ արդիւնաւոր իր հետեւանքներուն մէջ:

1890ին, զերման Պէհրէնկը, ճագոն Քիթազաթոյի աշխատակցութեամբ, ճագարներ անընդունակ դարձնելով քերանոզ (զնդերներու կարկում) միքրոպային հիւանդութեան, կը յաջողի ձեռք բերել մուկերու պատուաստը ընդդէմ թէթանոզի ժահրային մշակումին, անոնց մորթին տակ ներարկելով, այդ ներարկումէն 24 ժամ առաջ, անընդունակ ճագարներու արիւնէն քիչ քանակութեամբ ($\frac{5}{10}$ սանթիմետր խորանարդ իւրաքանչիւր մուկի):

Պէհրէնկ եւ Քիթազաթո յետոյ նմանօրինակ փորձեր կատարեցին տիֆթէռիին վրայ եւ հասկցան թէ այն շիճուկը որ առաջ կուգայ պատուաստուած կենդանիի մը արիւնէն, կը ժառանգէ, իր կարգին, պատուաստական կամ հակաթունային յատկութիւններ. տիֆթէռիի ենթակայ եղող կենդանիի մը մորթին տակ ներարկուելով, այդ շիճուկը զայն անընդունակ կը դարձնէ հիւանդութեան: Այսպէս ձեռք բերուած անընդունակութիւնը աւելական է: Դարձեալ, շիճուկին պատուաստիչ յատկութիւնը կը յայտնուի միայն երբ կը քաղուի այնպիսի կենդանիներէ որոնք արհեստականօրէն անընդունակ դարձուած են հիւանդութեան, եւ ոչ անոնցմէ որ արդէն բնականօրէն այդ անընդունակութիւնը կը ժառանգեն, կարեւոր կէտ մըն է այս, զոր շահադրբիւ է մօտեցնել՝ պ. պ. Ռիչէի եւ Հէրիքուրի կատարած մէկ հիմնական փորձով իրենց թելագրուած դիտողութիւններէն:

մէկին, այսինքն շան արեան պատուաստիչ յատկութիւնը՝ փտարիւնութեան դէմ, որուն անիկա ի բնէ անընդունակ է, — աճած է՝ փտարիւնութեան ժահրով նախապէս կատարուած ներարկումով մը, Հակաթունային շիճուկը յիսուն նազարի կանխարգել (préventif) կարողութիւն կ'ունենայ, այսինքն թէ, բնական կերպով տիֆթէռիին գոյացուն կենդանի մը՝ թունաւոր մշակման քանակի մը ($1/2$ սանդիմէթր խորանարդ օրինակի համար) ներարկութեան անընդունակ դարձընելու համար, բաւական է անոր ներարկել տասներկու ժամ առաջ $1/50000$ միայն միեւնոյն հակաթոյն շիճուկին ծաւալէն:

Ստեղծուած էր, այսպէս, լիակատար կերպով, վարակիչ հիւանդութիւններու դէմ պատուաստումի նոր մեթոտ մը՝ շիճկարոժոքիւն (sérothérapie) անունով: Կը կայանայ, ինչպէս կը տեսնուի, կենդանի մը, մէկ կամ յաջորդական պատուաստումներով, հիւանդութեան անընդունակ դարձնելուն եւ, դարձեալ, անընդունակ դարձած կենդանիին արիւնէն շիճուկը վերստին քաղելուն ու յետոյ հակաթունական յատկութիւններով օժտուած այս շիճուկին կենդանիներու վրայ ներարկելուն մէջ: Բայց այս զարմանը բոլորովին կանխարգելիչ էր եւ անկիրարկելի երբ հիւանդութիւնը յայտնուած էր:

Շիճկարութեան կիրարկութիւնը արդէն մեծ ծաւալում գտած է ձեռք բերուած զանազան յաջողութիւններով՝ տարափոխիկ հիւանդութիւններով՝ տարափոխիկ հիւանդութիւններու դարմանումին մէջ, ինչպէս կատալութիւնը, ապականիչ թոքատապը (pneumonie infectieuse), եւ այլն: Բուսակենսկաբանութեան (bactériologie) համար, ասով ուսումնասիրութեան ընդարձակ ասպարէզ բացուած է: Ինչ որ կը վերաբերի տիֆթէռիին, որ մասնաւորապէս մարդկային սևուր կը հետաքրքրէ, յաջողութիւնները խիստ արագ եղած են, ու պ. Ռու, որ ձեռք առաւ Ֆրանսայի մէջ Պէհրէնիկի մեթոտին կիրարկումը, կրնար յաջորդ տարին (1894) Պուտաբէշտի առողջապահական համաժողովին ծանուցանել այն վերջնական արդիւնքները որոնց հասած էր պ. պ. Մառթէնի եւ Քեայլուի աշխատակցութեամբ:

Պ. Ռու նախ եւ առաջ զբաղած է պատրաստել տիֆթէռիի ցպիկի ծայրայեղ ժահրային մշակումներ. գիտենք արդէն որ Յ⁷⁰ բարեխառնութեան եւ բաւականաչափ կերպով նորոգուած օդի հոսանքի մը մէջ կարելի է ձեռք բեր-

րել, երեք շաբաթ կամ մէկ ամիս յետոյ, թոյնով բացառապէս հարուստ մշակումներ:

Յետոյ, հարկ էր, անընդունակ դարձնելու յարմար կենդանին որոշել. պ. Ռո. կ'ընարէ ձին, մեծ հասակով կենդանի մը՝ որ կրնայ, հետեւաբար, շատ շիճուկ հայթայթել, միւս կողմէ աւելի լաւ կը առկայ, բարդատարար հաւատարմութիւն ունեցող կենդանիներու, ինչպէս կովը, թոյնի մեծաքանակ ներարկումներուն: Դարձեալ, կարելի է յաճախ ստանց անպատեհութեան, իրմէն արիւն քաղել, որ իր կարգին, զանրազորէն թանձրանալու յատկութիւնը ունի, ինչ որ խիստ նպաստաւոր է շիճուկին պատրաստութեան:

Պ. Ռու կը ստանայ մզումով, Շամպէւլանի պարզուտին վրայ, ժահրային մշակումի ենթարկուած մասջուրէ մը՝ ցպիկներէ բաժնուած թոյնը: Չայն կը մեղմացնէ քիչ մը քոխիջոխը s'hos աւելցնելով վրան: Յետոյ, անմիջապէս, ձիուն մորթին տակը կը ներարկէ, կանոնաւոր ընդմիջումներով, չափաւոր նախ եւ վերջ ի վերջոյ յարճուն քանակութեամբ տկարացած ժահր՝ նոխամեծաբորէն գործածելով յաճախ եւ սկար ներարկումներ, քան թէ հազուադէպ եւ զօրաւոր ներարկումներ: Վերջապէս, գործողութիւնը աւարտելու համար կենդանիին զուտ թոյնի յարճուն քանակութիւններ ներարկեց. գրկիէ ութը կամ տասը շաբաթ վերջը, ձին բոլորովին անընդունակցած էր. կրցաւ ստեղծել, առանց անպատեհութեան, մինչեւ 50) խորանարդ սանթիմետր զուտ թոյնի ներարկումին:

Այսպէս անընդունակ դարձած ձին է որ պիտի հայթայթէ հակաթունային շիճուկը: Գրեթէ ամէն քսան օրը անգամ մը նետառն (ponction) կ'ընեն անոր փողերակին (veine jugulaire) վրայ եւ կը քաղեն երկու քիլո արիւն: Գաղուած անճաժեշտ հականեխական պայմաններու տակ արիւնը յամրաբար կը թանձրանայ շիջերու մէջ. շիճուկը միայն առնելով՝ կը զետեղեն մասնաւոր սրուակներու մէջ որոնց քաղցրիկ խցաններն ալ ամացած են, աւելցնելով, գոցելէ առաջ, քափուրի (camphre) կտոր մը: Շիճուկը, երբ այսպէս պատրաստուած է՝ մութ եւ զով վայրի մը մէջ կրնայ անհունապէս պահուիլ, ու ծառայել միշտ ներարկումի:

Հակատիֆթէռիական շիճուկը միեւնոյն ատեն երկու յատկութիւններ ունի, կաւխարդեղախառն ու ինչ որ աւելի կարեւոր է, բուժողական: Կը ներգործէ բաւական արագ կերպով տիֆթէռիի թոյնէն յարճակուած գործարանաւորութեան վրայ՝ անոր վտանգաւոր հետեւանքներուն առջեւ առնելու համար: Այն վայրկեանին երբ կեղծմաշկեր կ'ընեն ինչիւնդի մը շնչառական գործարաններուն մէջ, կը քննեն թէ այդ կեղծմաշկերը տիֆթէռիին ցպիկը կը պարունակեն. անճաժեշտ է այդ բանին համար, բոցի մէջ ամացած ճերմակ ոսկիէ առեղի մը ծայրովը քաղել կեղծմաշկէն կտորիկ մը, յետոյ բաժնել զայն հաստատուն մշակումի վայրի մը մէջ (թանձրացած

չիճուկ). մշակուածի սրուակը 37° ջերմարանի մը մէջ կը զե-
տեղուի, ու քսանըչորս ժամ վերջը, բազմացած ցլիկներու
հաւաքական երեւոյթը թոյլ կուտայ վարժ աչքի մը ճանչ-
նալ ներկայութիւնը կամ բացակայութիւնը տիֆթէռիի
ցլիկներուն: Եթէ հիւանդութիւնը իրաւցնէ տիֆթէռի է,
20 խորանարդ սանթիմետր շիճուկի մէկ քանի անգամ նե-
րարկումը չուտով յառաջ կը բերէ անհետացումը սերմին եւ
անկումը կեղծմաշկերուն: Կ'արգիլէ միեւնոյն ժամանակ ամէն
տեսակ կազմալուծական արկած: Կասկածելի պարագաներու
մէջ, ներարկում մը հարկ է որ ըլլայ, այն թեթեւ խանգա-
րումները որ կրնան անոր հետեւիլ որ եւ է կարեւորութիւն
չունին եթէ զանոնք բազդատենք այն սոսկալի հետեւանք-
ներուն հետ որ կրնային ծագիլ հակառակ պարագային:

Հակաթունային շիճուկով դարմանումի եղանակը չա-
փազանց ակարացուցած է տիֆթէռիին մահացիութիւնը.
այն ամէն պարագաներու մէջ, ուր այսպէս որակուած հիւան-
դութիւնը ուրիշ տիտղոսով մը, ինչպէս թոքատապ (broncho-
pneumonie), կ'ընտոտած չէր, թերեւս իրաւունքը ունենայինք
ըսելու զայն բոլորովին ջնջած է: Ներելի է դարձեալ, միայն
սկզբնաւորութիւն մը ընդունիլ այս հոյակապ յաջողութիւ-
նը, որով մարդկութիւնը երախտապարտ պէտք է ըլլայ խու-
զարկուներու բազմաստեղութեան որ հետապնդած են տիֆ-
թէռիին եւ անոր դարմանումին: Երախտազիտական այս ար-
տայայտութեան մէջ, երկու անուններ պէտք է դրուին առա-
ջին կարգին մէջ, Գերմանի մը անունը, Պէրէնկ եւ Ֆրանսա-
ցիի մը անունը, Ռու: Բայց ըսենք, Ռուի աշխատակից՝ պ.
Մաթէնի հետ, թէ մէկ անուն մը կը սոււանի այս բոլորէն
բարձր, բուսակենսաբանութեան խուզարկութեանց ռանվի-
րային, Փասթէռի անունն է այն:

Բուսակենսիկները կենդանիներ են, այդ մասին կասկած
չկայ: Եթէ բուսական աարը նկատուած են անոնք, որովհետեւ
զանոնք պարուրող թաղանթը առնուազն սեյլուոզի մօտ նիւ-
թով մը կազմուած է: Ու նկատելով անոնց տեսակները, կազմած
են անոնցմով բուսաբանութեան մէջ անջատ ընտանիք մը,
որուն տուած են բուսակենսակաւի (bactériacées) անունը:

ՆՇԱՆ

ՓՈՒՍԱՆՑԵԼԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

(Մարդիային կղկղակների միջոցաւ)

(Ըստ պրոֆ. ՊՐՈՒՍՏԻ, Պարիզի Բժշկական Համալսարանէն)

Փանսասեկը (fièvre typhoïde) ամէն կողմ գոյութիւն ունէ եւ ամէն երկրում տարածված հիւանդութիւններից է: Միկրոբը որ նրան յատկանշում է, նախամեծարորէն կը բնակվէ հիւանդի աղիքներում եւ հիւանդութեան ամբողջ շրջանում գտնվում է այս վերջինի կղկղանքների մէջ:

Դարձեալ, մարսողական խողովակի միջոցաւ է որ փոխանցումը կատարվում է: Եթէ առանց զգուշութեան խնամուի մի ժանտառենդաւոր, եթէ մատերը կեղտովեն՝ կղկղանքների հետ շփմամբ, որ կը գտնվին ձերմակեղէնների, սաւանների վրա եւ, յետոյ, եթէ նրանք բերանը տարվեն, կամ անդական նիւթերի վրա, հիւանդութիւնը ստացվում է զիւրին կերպով: Դարձեալ ժանտառենդը փոխանցվում է՝ հիւանդի կեղտոտած սպիտակեղէնը լուանալիս:

Թվում է որ այդ հիւանդութիւնը միաժամանակ փոխանցելի է թէ օդի եւ թէ ջրի միջոցաւ: Յարձակվում է նախամեծարորէն տկարացածների, վաստակաբեկների կամ առողջապահական վատ պայմանների մէջ գտնվողների վրա: Անմաքրութեան եւ խիտ բնակութեան առանձնաշնորհեալ հիւանդութիւնն է ժանտառենդը՝ ինչ պատճառներից էլ յառաջացած լինի, լինի՝ միկրոբից, որուն ձգտում են բացարձակապէս վերագրել մի կարգ գիտողներ, լինի ընդհանուր եւ չափազանց կնճոռս պատճառներից՝ ինչ որ կարծում են ուրիշներ: Տեսնվում է որ նա կը ճարակի խոնված վայրերում, սրտեղ բաւական հոգ չէ տարվում մաքրապահութեան եւ օդափոխութեան: Բազմաթիւ զոհերի է պատճառ գառնում զօրակոյտերի մէջ՝ զինուորական փորձերի կամ պատերազմի ժամանակ զանազան անունների տակ, ինչպէս, յարատեւ ջերմ, ընդհատ ջերմ, լորձնաջերմ եւ էպպէս ժանտառենդ. մեծ բաժին մը ունի նա բանակների մահացիութեան մէջ:

Առանց կամենալու այստեղ մէջ բերել զանազան թէօրեաների, կարող ենք ասել, համառօտ կերպով, թէ ժանտատենդր մի տեղի հողին, օդին եւ ջրին կեղտոտութեան հետ ուղղակի համեմատական է եւ թէ, երբ այդ վայրում հողին մաքրութիւնը, օդին եւ ջրին զտութիւնը ապահովում են, ժանտատենդր արագ կերպով նուազում է: Ինչ որ հաստատուեց Վիէննայում, Բերլինում, Բրիւքսէլում, Լոնտոնում, Էնն, երբ հետզհետէ բարեփոխեցին առողջապահական պայմաններին՝ բերելով քաղաքներում խմելի ջուր, ազատ ամէն կեղտոտութիւնից, եւ ընդհանրացնելով մի եղանակ, ամէն տեսակ աղբիւրին անմիջապէս դատարկելու եւ խիտ բնակչութիւնից հեռացնելու համար:

Դոկտոր Բիւթթի աշխատութիւններից ի վեր զբաղված են գտնել ժանտատենդի փոխանցման յարաբերութիւնները՝ սննդեան ծառայող ջրի հետ: Հէնց վերջին ժամանակներումս կամեցան հիւանդութեան տարածվելուն իր բացարձակ պատճառ նկատել այդ եղանակաւ փոխանցումը: Այդ տեղ մի քիչ չափազանցութիւն կայ. բայց ճշմարիտ է որ ժանտատենդական կղկղանքների թափումից վարակված մի ջուր կարող է փոխանցել հիւանդութիւնը զանազան պարագաների մէջ, որոնց բոլորին տակաւին հեռու ենք ծանօթ լինելուց եւ թէ հարկ անհրաժեշտ է խոյս տալ այդ թափումից: Պ պ. Բրուարթէլ, Շանտմէս, Ուիթալ եւ Թիւանօ այս կարգի յարաբերական բազմաթիւ իրողութիւններ հրատարակել են:

Ժանտատենդի ախտարգելչութիւնը (prophylaxie) կայանում է ուրեմն նրա սերմին ամբողջական ջնջման մէջ, որ գտնվում է հիւանդի կղկղանքներում. սերմերը, որ կը փոխանցվեն մանաւանդ ջրի, սպիտակեղէնի եւ զգեստների միջոցաւ:

Հիւանդին պէտք է առանձնացնել, որքան որ կարելի է, եւ պահել ընդմիջտ, մաքուր պայմանների մէջ: Նրան խնամող անձերը պէտք է միայն նրա մօտ գնան, որոնք իսպառ հրաժարելու են՝ հիւանդի սենեակում ուտելուց, խմելուց եւ երբե՛ք մոռնալու չեն ճաշերից առաջ ձեռքերնին լուանալ աճառով եւ հակահեխիչ նիւթով:

Օրը երկու անգամ փոխել հիւանդի սենեկին օդը. վարագոյրներին, գորգերին, զարդերին պէտք է հեռացնել եւ զետեղել անկողնին՝ սենեակի կեդրոնում:

Հակահետադարձական համար օգտակար է գործածել հե-
տեւեալ մարմինները, մին զօրաւոր՝ սիւլֆատ սը կիւիլը,
խորիւր քը շօ 5 առ 100, այսինքն 50 գում նիւթերից
լուծել 1000 գում ջրի մէջ, միւսը տկար՝ այսինքն 20 գր.
սիւլֆատ թը կիւիլը, խլորիւր թը շօ, 1000 գր. ջրի
մէջ: Սիւլֆատի հեղուկը կարելի է գործածել 1 առ 1000
(զօրաւոր) կամ կէս առ հազար (տկար), պարագաների հա-
մաձայն: Սիւլֆիւմէի ջրի պատրաստութիւնը պէտք է դու-
նաւորել ֆիւլիւմով կամ կօզիւմով եւ իւրաքանչիւր 1000
գումի վրայ աւելացնել 3 գր. աւիթ խորհիսիլ: Ձեռքերը
լուծանալու համար գործածել տկար պատրաստութիւնից:

Հիւանդների բոլոր կղկղանքները հարկ է անմիջապէս
հակահետադարձական պատրաստոված կրաջուր դնելու է,
նախապէս, կղկղանքների յատկացված ամանների մէջ:

Ընդհուպ, փոխադրել կղկղանքներին ճեմիչներում,
որոնք պէտք է հակահետադարձական առնուազն օրը երկու անգամ
Չ առ 100 համեմատութեամբ պատրաստոված կրաջուրով:

Եթէ ճեմիչ գոյութիւն չունի, պէտք է կղկղանքներին
թաղել մի փոսում, որուն ծածկելով հակահետադարձական նիւթերով,
հետի ջրհորներէ եւ ամէն ջրի գնացքէ: Բացարձակապէս
արգելված է կղկղանքներին թափել հոսող ջրերի մէջ կամ
աղբանոցներում:

Ի՞նչպէս պէտք է մաքրել ճեմիչները օրը երկու անգամ:

Երբ պէտք է հակահետադարձական փոսը, ուր դատարկվելու
են հիւանդին արտադրութիւնները, վրայից լեցնելու է
կրաջուրին ցոյց տրված համեմատութեամբ: Եթէ փոսի
նիւթերը փտում են արդէն, պէտք է սպասել նախ որպէս
զի անձնակի կազային արտադրութիւնները վերջանան, ինչ
որ կիրը դուրս է բերում իր աղային բազադրութիւններից
եւ յետոյ կորսուի այսպէս մի մաս կիր՝ հակահետադարձական
միջոցում: Պէտք է խառնել հեղուկը մի երկար գաւազանով
ամօնեակի մեկնումը փութացնելու եւ խառնուածքը միօ-
րինակ դարձնելու համար: Եւ լեցնելու է կրաջուր մինչեւ
որ որոշ կերպով աշխատեն հակադրութիւն մը գոյանայ,
ինչ որ ստուգվում է տռնըտայի մի թղթով:

Սպիտակեղէնները, որոնք մարմնոյն շփում են, պէտք
է անմիջապէս թրջվեն, եւ պահվեն ամբողջ երկու օր, զօ-
րաւոր հակահետադարձական պատրաստութեան մէջ: Յետոյ պէտք
է միայն լուանալ՝ կէս մամ եռացած ջրի մէջ թողլուց վերջ:

Միւս սպիտակեղէններին կարելի է պահել տկար պատրաստութեան մէջ: Միեւնոյն նախզգուշութիւնները պէտք է ձեռք առնվեն լուացման պահուն: Ոչ մի սպիտակեղէն լուանալ հոսող ջրի մէջ, որ՝ հակառակ պարագայում, երբ խմելու գործածուի, կարող է ընդհանուր վարակման առիթ դառնալ:

Հիւանդների եւ հիւանդապահների զգեստները զետեղել շոգիով հակահեխիչ ջերմարաններում, ճնշման տակ՝ կէս ժամ, կամ այնքան ժամանակ եռացող ջրի մէջ պահել:

Երբ այդ երկու մեթոտները չէ կարելի գործածել, զգեստները հակահեխել ասիք սիւլֆիւրիտով:

Կղկղանքներից կեղտոտված զգեստներին պէտք է պահել զօրաւոր պատրաստութեան մէջ, գոնէ մի ժամ, եթէ երբեք անկարելիութիւն կայ գործադրել վերեւ յիշուած եղանակները: Տախտակամածի, գորգի, առարկաների վրա պատահած կեղտոտ բիծերը լուանալ մի զօրաւոր պատրաստութեամբ:

Գալով անկողնոյն եւ նրա զանազան մասերին, վերմակ, սաւան, եւն., զետեղել ճնշական ջերմարանի մէջ, կամ, երբ սա չէ գտնվում, ասիք սիւլֆիւրիտով հակահեխել:

Կարելի արագութեամբ մուսածներին փոխադրելու է գերեզմանատուն, լաւ կերպով գոցված դպրոցներում որոնք պարունակելու են կտրված փայտի թեփ 3-4 մասնաչափ թանձրութեամբ, դիակից հոսող հեղուկներին մզումը արգելելու համար: Թաղել անմիջապէս:

Ժանտատենդից բռնված մի հիւանդի բնական սենեակը պէտք է բնակելի լինի ամբողջական հակահեխումից յետոյ: Բաց թողնել լուսամուտներին առնուազն քսան եւ չորս ժամ: Եւրոպական երկիրներում քաղաքային վարչութիւնն է որ յաճախ հակահեխական գործողութիւնները կատարում է:

Համաճարակի ժամանակ պէտք է եռացած ջուր խմել: Կասկածելի աղբիւրներից եւ ջրհորներից ջուր խմելը պէտք է արգելվէ: Հացագործները երբեք այսպիսի ջրերից գործածելու չեն՝ հաց թխելիս:

Այն ամէն պատճառները, որոնք համաճարակների արչուանքին հող են պատրաստում, պէտք է բարձվեն, երբ ժանտատենդի շուրջ է դառնում խնդիրը:

Դարձեալ առողջապահական ընդհանուր կանոններին, որոնք կիրարկվում են ամէն ժամանակ, պէտք է ուշադրութիւն դարձնել՝ մասնաւորապէս ժանտատենդի ժամանակ, այսինքն մաքրութիւն խմելի ջրի, խուսափում համախրմ-

բումներից, հանդէսներից, տօնավաճառից, եւն, հակա-
նկեցութիւն շուկաներում գնված սննդեղէնների վրա,
մաքրութիւն հողի, կանոնաւոր հեռացում աղբերի, մաք-
րութիւն բնակավայրերի, եւ այլն:

Մասնաւոր հսկողութիւն եւ հականկեցում այն վայրե-
րում որ յատկացված են գործարանների, ճարտարապետու-
թեան կամ գործաւորական խմբումների:

Կանոնաւոր հականկեցում հասարակաց եւ մասնաւոր
ձեմիչների, աղբանոցների:

Երբ համաճարակի երկիւղ կայ, նրա երեւնալուց առաջ
մաքրել կոյանոցներին, որպէս զի հիւանդութեան ժամա-
նակ փտած նիւթերի շարժումը նուազ լինի. քաղաքական
իշխանութիւնները մասնաւորապէս հսկելու եւ մաքրելու
են այն թաղերին որոնք արդէն համաճարակներ կեղբոն
են եղել անցեալում:

Խ Օ Լ Է Ր Ա

Ասիական խօլէրան Արեւելքում, Հնդկաստանում,
Էնթօ-Շինում տեղական մի հիւանդութիւն է: Ծարակում
է Եւրոպայում սահմանաւորված կերպով, երբ համաճա-
րակի երեւոյթ է ստանում:

Փոխանցվում է գլխաւորապէս ծովային ճանապարհով,
երբ նաւեր գալիս են այն երկիրներից ուր խօլէրան միշտ
գտնվում է. ցամաքի ճանապարհով, վարակված անհատ-
ներ տեղից տեղ փոխադրուելով՝ ցանում են հիւան-
դութեան սերմերին իրենց անցքի վրա: Եւրոպայում,
այժմս, մանաւանդ ծովային ճանապարհով է տարածվում
խօլէրանի համաճարակը: Այն նաւերը որ գնում են վա-
րակված նաւահանգիստներ եւ աւելում են խօլէրայից արդէն
հիւանդ անցորդներ, փոխադրվում են Եւրոպա հիւան-
դութիւնը:

Դօկտ. Կոխ ապացուցեց թէ խօլէրան մանրագիտական
մի միկրոքի հետեւանք է, որ իր ձեւի համաձայն անվա-
նում են *ստրակիս ցայիկ* եւ որ գտնվում է հիւանդի կրղ-
կանքների եւ փսխութեան մէջ: Ապրում է եւ բազմա-
պատկվում է աղիքներում միայն, ու խօլէրական լուծո-
ղութիւնը մասնաւորապէս կազմում է հիւանդութեան ծա-
ւալելու միջոցը, ինչպէս ժանտատենդական կղկղանքները:
Այդ լուծողութիւնը կեղտոտում է անկողինը, սաւան-
ները. եւ հիւանդութիւնը ստացվում է անոնց դպչելիս:
Խմելի ջուրը մեծապէս նպաստում է, երբ վարակված
է, խօլէրայի տարածման: Ախտարգելական միջոցները մի
եւնոյնն են, ինչպէս ժանտատենդի դէմ գործածվածները:

Պարիզ, 8 ապրիլ

Կ. Յ.

Դ Պ Ր Ո Ց

ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Հրապարակախօսութիւն փրօֆ. Լ. ԺէՌԱՌ-ՎԱՌԷԻ,
Տիժօնի Դպրութեանց Համալսարանէն)

I

Դպրոցը եւ Ընկերութիւնը

Ընկերութիւնը ամէն բան դպրոցէն կը սպասէ: Նախնական դաստիարակութիւնը՝ կազմուածքին հետ խառնուած, վճռական եւ, էապէս, միակ գործօնը պարտի ըլլալ բարոյական կեանքի. կազմուած մարդը բնականօրէն եւ ճակատագրականօրէն կը պարունակէ մանուկը: Վերջինս պէտք է որ դպրոցէն ելլէ՝ զինուած լաւ սովորութիւններու բաւական պաշարով մը. աւելի ուշ միայն՝ ազատ թռիչ պիտի տայ իր բնութեան՝ բարիք կամեհալու, զայն կատարելու եւ այդ ճիգին մէջ զօրանալու:

Այս կարծիքը շատ տարածուած է, սակայն կեղծ է: Կը մոռնան մտածել թէ դաստիարակութիւնը երբեք չ'ամբողջանար. թէ ամէն օր եւ ամբողջ կեանքին մէջ ան կը շարունակուի եւ կը նորոգուի, թէ յարատեւ վերսկսում մըն է: Բայց գլխաւոր գործօն մը կը միջամտէ իր անդադրուն գործունէութեան մէջ, ու այս գործօնը կամ ազդակը ընկերական միջավայրն է: Զայն կ'անտեսեն որովհետեւ անոր ազդեցութիւնը դանդաղ եւ անզգալի է եւ որովհետեւ առ հասարակ նման է նախնական դաստիարակութեան. սակայն այդ պատճառով ընկերական դաստիարակութիւնը նուազ իրական, բաղդատելի ըլլալէ չի դադրիր, իր թագունութեամբ եւ ուժգնութեամբ, մասնկային ուժերու անդիմադրելի եւ անտեսանելի այն կարողութեան հետ, որ կը կազմէ ֆիզիքական աշխարհը: Պէտք է պահանջել դպրոցէն այն ինչ որ կրնայ տալ, այսինքն ո՛չ թէ բարոյականութիւն մը չափուած, աւարտած, հասուն ինքն իր եւ վաղորդայնին մէջ, այլ պարզապէս բարոյական կեանքի պատրաստութիւն մը, հիմնարկէք մը՝ ոչ թէ վերջնական սովորութիւններու, այլ հակամիտութիւններու եւ նախամե-

ծարանքի. ոչ թէ կամքի, այլ լաւ կամքի: Մնացածը աւարտել ընկերութեան կը մնայ:

Ընկերութիւնը՝ իրեն վերապահուած այս գերը՝ ի՞նչպէս կը խաղայ: Դպրոցին եւ ընկերութեան միջեւ եղած առընչութիւնները, այնպէս ինչպէս գոյութիւն ունին այսօր Ֆրանսայի մէջ, կրնան երկու օրէնքներու կապուիլ.

1. Ընկերութիւնը առեւ քան ի գործ կը դնէ խախտեցող, դպրոցին մէջ, նկարագրի դաստիարակութիւնը, ու ատով իսկ երկրորդական կրթութեան կը վնասէ. 2. Ընկերութիւնը առեւ քան ի գործ կը դնէ խախտեցող, դպրոցէն դուրս, բարոյակրթական զարգացումը, ու ատով կը ճնշէ մանաւանդ նախնական կրթութեան վրայ:

Նկարագրի դաստիարակութիւնը մասնաւորապէս փափուկ է. գործն է այն, ոչ թէ խորհուրդներու, այլ սեպհական վարժութեան. կը զարգանայ՝ ինքզինքը հաստատելով միայն: Արդ, այդ բանը կ'ընէ իր թռիչին անբաժան վտանգները արհամարհելով: Սակայն հոն ուր վտանգ կայ, արկած ալ կայ: Արկածները, Ֆրանսայէն դուրս, կը հիւանդացնեն ընտանիքները. բայց զանոնք չին կասեցներ. Ֆրանսայի մէջ զանոնք կը կազմալուծեն: Իրենց կարգին ընտանիքները, իրենց երկիւղով, բողոքներով, սպառնալիքներով կը կազմալուծեն, մանաւանդ գիշերօթիկներու մէջ, դաստիարակիչները: Իրենց անգողտնապահ եւ վախկոտ հսկողութեամբ, ընտանիքները կը քաջալերեն համբերութեան, ճշգրտահոլութեան եւ քաղաքավարութեան փոքրիկ առաքինութիւնները, ու այդ բանը պատ Ֆրանսայի մէջ կը ներշնչէ ստրկական դաստիարակութիւն մը:

Փոխարէնը ի՞նչ հիւրնկալութիւն կը վերապահէ ընկերութիւնը, դպրոցէն ելլելուն, այն մանկան զոր իր դաստիարակները բարձրացուցած են արդարութեան, համերաշխութեան եւ մարդկային լայն գթութեան սիրոյն: Ի՞նչ միջավայր կը վերապահէ մանաւանդ նախնական Դըպրոցէն ելլող տղուն համար: Միջավայր մը զոր զանազան իրաւացի պատճառներ կը միանան յաճախ վտանգաւոր եւ միշտ աննպաստ դարձնելու:

Առաջին տեղը՝ քաղաքներու ստացած յարճուն կարեւորութիւնը, ուր շոյալութեան, զուարճութեանց եւ անառակութեանց առիթները աւելի բազմաթիւ են. — յետոյ անհատականութիւնը (individualisme) զոր քաղաքները աւել

լի աղետաւոր կը դարձնեն: Յեղափոխութենէն ի վեր, գործաւորը ազատ եղած է. բայց ամբոխին մէջ աղատութիւնը բարոյական առաքինութիւն ըսել չէ, ու առանձնութիւնը, որ կը զօրացնէ արդէն զօրաւորները, կը ճնշէ տկարները: Երրորդ պատճառ մը կը նկատուի յարգանքի ըմբռնողութեան բոլորովին խախտումը: Կինը, մանաւանդ, այդ բանին գոհուած է. թո՛ղ չի բողոքեն երբ հոս յիշենք կաշակերտին, որովհետեւ կալանթըոին յարգանք ըսել չէ: Երիտասարդ Ֆրանսացի մը, ուսանող կամ զինուոր, իր մօրմէն ու քրոջմէն դուրս, զոր սրբարանի մը մէջ կը պատըսպարէ, զոր կը պարփակէ իր գորովով ու խոհականութեամբը, կ'նոջ մասին իր ըմբռնողութիւնը պիտոյ մատնուիմներով եւ անմաքուր պատկերներով կը սնուցանէ: — Զորրորդ պատճառ մը, որ բառի անհեթեթ հակասութիւն մը կ'ամրապնդէ, անհամեստ մամուլն է, գրեթէ այնքան աղետաւոր՝ որքան վերջին պատճառ մը, ամենէն անարկուն, այսինքն ալքոլամոլութիւնը:

Ընդդէմ այդքան չարազէտ ազդեցութիւններու՝ դիմադրելու կարող ամէն միջոց գործածել բարի է: Ամենէ ուժեղներէն մէկը դարձեալ դպրոցն է, որ ամէն բանի հիմն է. դպրոցը՝ մարդկային գործ, անկատար հետեւաբար իր թերութիւններովը, յուսախափութիւններովը, սխալներովը՝ սակայն եւ այնպէս զօրաւոր եւ բարձր, անձնուէր վարիչ մարմնով մը. կենսական գործ, զոր քաջալերել եւ կատարելագործել հարկաւոր է:

II

Մեքսիկեռու խնդիրը. — Ապստուցում

Գործածուելիք մեթոսներուն մէջ նախ եւ առաջ նըպաստաւոր թուած է կրթութիւնը՝ սրտի միջոցաւ: 1882ին նախարարական որոշումներ այդ բանը հաստատած են. յետոյ տարիներ կ'անցնին, նախամեծարութիւնը ապացուցողական կրթութեան մը կողմը կը հակի: 1885ին պ. Կռէաու, մնայուն քարտուղար Ա. կադեմիայի, շրջաբերականով մը պ. Ռապիէի, (սեսուէ երկրորդական կրթութեան), մէկ տեղեկագրութիւնը կը հրատարակէ, որուն համաձայն դատարարակը պէտք է որ ամէն բան շուսաքանե եւ քացարե. — Նորէն քանի մը տարիներ կ'անցնին, խորհուրդ կը տրուի դարձեալ վերագտնալ զբացուցի կրթութեան:

Ճշմարիտ է որ երկու մեթոտներն ալ պէտք է որ գործադրուին միակցաբար, ըստ չափու դաստիարակներու կազմուածքին, աշակերտներու տարիքին, հարցումներու բնոյթին: Սակայն կարելի է ատոնց դերը բնորոշել. բարոյականը երկու տեսակ պատուիրանքներ կը պարունակէ, ոմանք գրական, ուրիշներ բացասական: Առաջիններով կը պարտաւորէ կամքը գործունէութեան, անոր ծրագիր մը, հետազոտուելիք նպատակը ցոյց տալով: Ընտանեկան, հայրենասիրական եւ գթասիրական պարտականութիւններու պարագան է այս: Նմանօրինակ պարտաւորութեանց մէջ զգացումը իր հիանալի դերն ունի, որովհետեւ ներքին զսպանակ մըն է եւ արդէն սկսուած գործ մը: — Բացասական պարագաներու ուրիշ կարգ մըն ալ կայ, այսինքն անոնք որ արդելիչ նկարագիր ունին, ու այն առաքինութիւնները զոր անոնք կը գովաբանեն էսպէս զրկանքներու վրայ կը յենուն: Այս ալ անհասական պարտքերու, ինչպէս չափաւորութիւնը, եւ արդարութեան պարտքերու, ինչպէս իրաւանց յարգանքը, պարագան է: Բարոյագիտութեան այս մասին մանաւանդ կը վերաբերի ապացուցողական մեթոտը: Եթէ, իրօք, զգացումը թռիչքի ուժ մը կը գործածէ, տրամաբանութիւնը ընդհակառակը կասեցնող գեր մը կ'իւրացնէ, առաջինը շարժիչ մըն է, երկրորդը սանձ մը:

Այս սանձը գործածել խորհուրդ չի տար մանկավարժ մը, պ. Էվրէն: Ըստ իրեն, շահու տեսակէտէն ծագող պատճառները բարոյականին անարժան են, ու տրամաբանութիւնը ճակատագրականօրէն այդ կարգի պատճառներու կողմը կը հակի: Կ'ընդունիմ առաջին գիտողութիւնը, բայց կը մերժեմ երկրորդը: Շահագիտական վարդապետութիւնը կ'ենթադրէ թէ ամէն սխալ կը տուժէ. այս բանը ճիշտ է անճարակ սխալներու համար, բայց ոչ ուրիշներու: Անչափաւորութիւնը միշտ հիւանդութեան չի յանդիւր, գողութիւնը միշտ դատարանով չի վերջանար: Հասուն մարդը իր ախորժակներով, կարելի հետեւանքներու առջեւ, թուղթ խաղցող մըն է. միայն յաջողութիւնն ու բաղդը նկատի կ'առնէ:

Շահագիտականութիւնը ուրեմն կրկին կերպով սխալ է, կեղծ եւ վտանգաւոր ըլլալով՝ ու եթէ ապացուցումը այդ ճամբով գործադրուէր, այդ տեսակէտով իսկ դատապարտուած էր: Բայց այդպէս չէ. եթէ ամէն շահու շար-

Ժառիթ պատճառաբանութիւնն է, ամէն պատճառաբանութիւն շահու շարժառիթ չէ: Կը համոզուինք, այդ մասին, եթէ մտայտիպարենք գործերը ոչ թէ արտաքուստ՝ այլ ներքնապէս. եթէ նկատի առնենք երջանկաբեր եւ յաղթական սխալը: Այս տեսակէտներէն հետեւեալ սկզբունքը կը ծագի, ենթակայ կարելի ապացուցման, հետեւաբար կը թուութեան, — բարոյական գործի մը հետեւանքները ինքնին բարոյական են, ու փոխադարձաբար: Ուրիշ խօսքով, պարտականութիւնները զիրար կը բռնեն, ու մէկին բռնաբարումը՝ տարաբաղդօրէն միւսներուն բռնաբարմանը տեղի կուտայ: Բարոյական տեսակէտով տրուած որ եւ է հարուած հետզհետէ ամբողջ չէնքին մէջ արձագանք կը գտնէ: Կամ վերջապէս, ու ինչպէս որ ստոյիկեանները զայն խորապէս տեսած էին, այն որ առաքինութիւն մը ունի՝ բոլոր առաքինութիւններն ունի, այն որ մոլութիւն մը ունի, ունի նաեւ բոլոր մոլութիւնները:

Ստախոսութեան վրայ է՝ խնդիրը: — Տկարութիւններու ամբողջ խուճը մըն է որ անոր կ'ընկերանայ: — Դու կը ստես, որովհետեւ պահելիք բան մը ունիս. դու զքեզ մարդոց ցոյց չես տար՝ այնպէս ինչպէս որ ես, քու մէջդ խաւարին անկիւններ կան, ամօթալի վէրք մը ծածկելու համար: — Կամ կը ստես՝ խոյս տալու արժանաւոր պատիժէ մը. կը մատնես ուրեմն ոչ միայն պարտականութիւններու առաջինը, այսինքն անկեզձուութեան պարտականութիւնը, կը մատնես նաեւ իրապէս մարդ եղող ամէն մարդու ինքզինք կորովի ցոյց տալու պարտականութիւնը. կը ստես որովհետեւ վատ մըն ես: — Այս չէ ամէնքը, կը ստես դարձեալ, շահ մը ձեռք ձգելու համար, որ քեզի չէր վերաբերեր, ու ատով չես պահեր արդարութեան մեծագոյն օրէնքը: Կը ստես վերջապէս կողոպտելու համար ուրիշ մը իր իրաւունքէն, ատով գողցող յանցաւոր մը կը դառնաս: Նմանօրինակ պատճառաբանութիւններ կը կիրարկուին արդարութեան բոլոր պարտականութեանց, կեանքի, բարիքներու եւ ազատութեան յարգանքին մէջ:

Ապացուցողական մեթոտը ունի այսպէս իր սկզբունքը. փորձառութեան մէջ իր ոտքը կը զնէ եւ հոն կը մնայ: Միայն անոր փորձառութիւնը շահադիտական վարդապետութենէն չի ծագիր՝ որ նիւթական արգիւնքներու եւ իրողութիւններու վրայ յենու, առաջինը ուղղուած է

դէպի գաղափարները, նպատակաւորումները: զգայնութեան փորձէն չէ որ, առաջ կուգայ, այլ խղճմասանքին: Կը հնազանդի այնպիսի համերաշխութեան օրէնքի մը ուր ո եւ է սխալանք կը պարփակէ միւս բոլորը. գաղտնի ուժ մը զանոնք կը քաշէ ու կը միացնէ: Անոնցմէ մէկին ինքզինքը լքանել, կը նշանակէ ամբողջին ենթարկուիլ, ինքզինքին պատրաստել կեղծիքի եւ գաղտնաւորութեան կեանք մը: Կը կորսնցնէ, այդպիսին, միւս մարդոց հետ մտաւորական ամէն մերձակայութիւն, կը խօսի անոնց լեզուն բայց չի բաժնի անոնց զգացումները: Բարոյական աքսոր մըն է այդ ուր հոգին հալածական կը խոնջի՝ իր մութ խորհունդներուն մէջ ծալուած: Եթէ խենթութիւնը մըտքին ցնորքն է, մեղքն ալ խղճին ցնորքն է:

Միւս կողմէ փոխադարձաբար պարտականութիւնները իրարու յենարան կը դառնան եւ կը զօրանան: Մէկին հաստատակամ գործնականութիւնը միւսներուն գործնականութիւնը կը ծնի: Կը ստեղծեն, ամբողջովին, լուսաւոր կեանք մը, սրտի հաղորդութիւն մը ուրիշին հետ եւ կատարեալ ուղղամտութիւն: Մէկը միւսին մէջ կը գտնէ իր դոյութեան պայմանը: Պարտականութիւնը պարտականութեամբ կ'ապացուցուի:

Այդ կարգի պատճառարանութիւններ երբ ըմբռնուած եւ հասկցուած են, վերջնական համոզումով կը քանդակուին, կը հաստատուին լուսաւոր եւ անդառնալի ճշմարտութեամբ մը: Անթափանցելի դարձած իմաստակութեանց (sophisme)՝ կը դիմադրեն արժանապատուութեան ակնարկութիւններուն, կրքի փոթորիկներուն ու այն ամէն բաներուն որ կրնան նշեմացնել իրենց պայծառութիւնը: Բայց անոնք չեն հասկցուիր անոնցմէ, եթէ նախապէս հասկցուած չեն ճշմարտարկներէն. ու այս վերջինները այդ բանին միայն մտածողութեան ունակութեամբ կրնան հասնիլ: Արդ, այդ ունակութիւնը յանկարծական կերպով չի ստացուիր: Երկար կարգապահութիւն եւ ամբողջ դաստիարակութիւն մը հարկաւոր է, զոր ապահովելու են վարժապետանոցներու մէջ փիլիսոփայութեան դասատուները, նոյնքան լիսէններու եւ համալսարաններու մէջ: Այս եզրակացութիւնը ոչ միայն մերն է այլ եւ ուրիշներու:

Լ Ա Մ Ա Ռ Ք

Երկու կարգ գիտնականներ կան: Ոմանք, իրենց նախորդներու հետքերուն հետեւելով, կ'ընդարձակեն գիտութեան սահմանները եւ արդէն եղած գիւտերու վրայ ուրիշներ կ'աւելցնեն. իրենց աշխատութիւնները անմիջապէս կը գնահատուին, ու լիապէս կը վայելեն խիստ արժանաւոր համբաւ մը: Ուրիշներ, թողլով յաճախուած արահետները, աւանդութիւններէն ազատագրուած, ապագային սերմերը կը ծլեցնեն, որոնք, այսպէս խօսելով, պահուած էին անցեալին կրթութեան մէջ. երբեմն այդպիսիները յարուած են, իրաւամբ, իրենց կենդանութեան. աւելի յաճախ, կը հեռանան՝ առանց ճանչցուելու ժամանակի գիտական հասարակութենէն, որ անկարող էր զիրենք հասկնալու եւ իրենց հետեւելու: Անշարժութիւնը, սովորաւորութիւնը եւ սգիտութիւնը իրենց կը հակադրեն ներկային մէջ անյաղթելի դիմագրութիւն մը. կը մեռնին լքուած, սակայն գիտութիւնը կը քալէ, իրողութիւնները կը բազմապատկուին, մեթոտները կը կատարելագործուին ու իրենց կենդանութեան յետամնաց հասարակութիւնը՝ յառաջդիմութեան ճամբուն վրայ զիրենք կ'ողջունէ: Այն ատեն բոլոր մոռցուած արժանիքները կը յայտնուին փայլուն կերպով. այն ջանքերը զոր անոնք թափած էին իրենց արդար բաժինը կը ստանան. կը հիանան իրենց հանձարին վրայ, կը հաստատեն իրենց կանխագուշակութիւնը, ու ապամահ փառք մը կը մխիթարէ իրենց աչակերտները մոռացումին որ տխրունի շունչ մը տարածած էր այն տարիներուն վրայ, որոնց շրջանին մէջ ի զուր կ'ուլած էին անոնք ճշմարտութեան յաղթանակին համար: Լամառք միեւնոյն ատեն կը պատկանի այդ երկու կարգ գիտնականներուն որոնց վրայ խօսեցանք: Բուսաբանութեան եւ կենդանաբանութեան մէջ իր նկարագրական աշխատութիւններով, ինչպէս նոսիւ իր ժամանակակիցներէն ընդուն-

ւած այն կատարելագործութիւններով, զորս ներմուծեց կենդանիներու կարգաւորութեան մէջ, գրաւեց առաջին տեղ մը՝ իր ասեղնի բնախոյզներու շարքին մէջ. բայց առհասարակ գործարանաւոր էակներու վրայ, իր փիլիսոփայական տեսութիւնները գրծուեցան ու նոյն իսկ լրջօրէն վիճարանուելու պատուին շարժանացան: Ատոնց կը շնորհէին միայն կամ քաղաքավարական լուծիւն մը եւ կամ ծիծաղելի արհամարհանք մը: Սակայն, Լամառքի գլխաւոր յղացումներն են անոնք որ այժմ սկսած են տիրապետել բուսաբանութեան եւ կենդանաբանութեան մէջ:

Ժան-Պափիսթ-Փիէռ-Անթուան տը Մոնէ, ուրիշ անունով՝ տը Լամառք ասպետը, ծնաւ Պազանթէնի մէջ (հին Փիքառտիս) 1744 օգոստոս 1ին: Փիէռ տը Մոնէի տասնըմէկերորդ տղան էր, ծագած Պէառնի հին ընտանիքէ մը, որուն հայրենական ժառանգութիւնը խիստ համեստ էր: Իր հայրը զայն կղերականութեան կը յատկացնէր, սովորական հասոյթը այդ ժամանակի կրտսերներուն, ու զայն Ամիէն քաղաքին Յիսուսականներուն կը յանձնէր: Դեռ ասի ազնուականին կոչումը չէր այդ: Իր ընտանիքին մէջ, ամէնքը զինուորական ասպարէզը ընտրած էին: Երէց եղբայրը Պէռկ-օփ-Չումի պաշարման պահուն կը գնդակահարւէր. միւս երկու եղբայրները կը ծառայէին արդէն, ու Ֆրանսան կը սպառէր անհաւասար կռուի մը մէջ: Իր հայրը սակայն կ'ընդգրկմանար իր բաղձանքներուն. բայց երբոր մեռաւ, 1760ին, Լամառք ազատ իր հակամիտութիւններուն հետեւելու, ճամբայ ինկաւ անպէտք ձիով մը գէպի գերմանական զօրաբաժինը, որ Ուէսթֆալիայի մէջ (Լիփսթատի) մօտ բանակ դրած էր: Իր հետը կը տանէր նամակ մը զոր իրեն մէկ դրացուհին՝ տիկին տը Լամէթ գրած էր, որով զայն կը յանձնարարէր Պօփոլէի գնդապետ՝ պ. տը Լասթիքի: Վերջինս, տեսնելով 17 ամեայ երիտասարդին հասնիլը, որ տակաւին աւելի պզտիկ կ'երեւէր իր նիհար կազմուածքովը, զրկեց զայն իր զօրաբաժինն մէջ: Յաջորդ օրը կռուի երկիւղ կար: Պ. տը Լասթիք աչքէ կ'անցնէ իր գոհուող եւ կը տեսնէ իր պաշտպանեալը ընտրեալ զօրքերու առաջին շարքին մէջ: Ֆրանսական բանակը, այդ ատեն, տը Պոսկլի

մարաջատին եւ տը Սուպիզ իշխանին հրամանին տակ կը գտնուէր: Միացեալ զօրախումբերը իրենց ընդհանուր պետ ունէին Ֆէնտինան տը Պրիւնսուիք իշխանը: Ֆրանսացի երկու զօրապետները անհամաձայն գտնուելով յաղթուեցան: Այն զօրախումբը, ուր կը գտնուէր Լամառք, թնթանօթի կը բռնուի՝ թշնամի բանակին կողմէն, յետո նահանջումի խառնաշփոթութեանց մէջ զայն կը մոռնան: Սպաները եւ ենթասպաները կը սպաննուին, տասնըչորս մարդ միայն կը մնար. ամենէ հինը կ'առաջարկէ հեռանալ: Լամառք կը պատասխանէ. «Այս պաշտօնը մեզ լստահուած է, կրնանք զայն թողուլ միայն այն ատեն՝ երբ մենէ առնուի»: Իրօք, գնդապետը տեսնելով որ այդ զօրաբաժինը չէր երեւիր, մինչեւ այն ատեն գաղտնի մնացած արահետներէ, ձիաւոր զօրք մը կը զրկէ ու ետ կը կոչէ: Յաջորդ օրը Լամառքի սպայութեան աստիճան կը տրուէր ու քիչ ժամանակ վերջը՝ տեղակալութեան: Այս փայլուն սկզբնաւորութիւնը, բարեազդաբար գիտութեան համար, Լամառքի ապագան պիտի չպատրաստէր: Խաղաղութեան ատեն թուրն եւ Մոնաքո կը զրկուէր, ուր իր վզին վրայ խոյլերու բորբոքում մը վիրաբուժական գործողութեան մը պէտքը կը զգացնէ: Գործողութիւնը կը կատարուի Փարիզ, որ իրեն վզին վրայ խոր սպիւներ կը թողու՝ ամբողջ կենդանութեանը:

Թուրնի եւ Մոնաքոյի շրջականերուն հարուստ բուսականութիւնը դեռատի սպային ուշադրութիւնը արթնցուցած էր. բուսաբանական քանի մը ծանօթութիւններ քաղած էր Շոմէլի Գործածակաւ Բոյսերու Ուսումնասիրութեան Հեռացած գինուորական ծառայութեանէն, ունենալով 400 ֆրանքի համեստ թոշակ մը, Փարիզի մէջ սեղանաւորի մը մօտ կ'աշխատէր. բայց մղուած անդիմադրելի կերպով դէպի բնութեան ուսումնասիրութիւնը, իր պատուհանէն կը դիտէր ամպերու ձեւերն ու շարժումները, ու կը սորվէր Արքայական պարտէզին բոյսերը ճանչնալ: Ինքզինքը իր հողին վրայ կը զգար, ու ըմբռնեց, ինչպէս Վոլթէո այդ բանը Քոնտոսէի առթիւ ըսած է, թէ տեւական գիւտեր կրնային զինքը այլապէս փայլեցնել քան հետեւակ զօրքի գունդ մը: Դժգոհ բուսաբանութեան մէջ գործածուած զը-

րութիւններէն, գրեց վեց ամսուան մէջ Ֆրանսական Ծաղկաբաւնութիւնը, որուն սկիզբը դրած էր բոյսերը փնտռելու ճանչնալու Բանալին, որուն շնորհիւ սկսնակ մը իսկ իր ձեռքին տակ ինկած որ եւ է բոյս կրնար սահմանել: 1778ին Ռուսո նորաձեւութեան մէջ մտցուցած էր բուսաբանութիւնը. նոյն իսկ կիները անով կը հետաքրքրուէին: Պիւֆոն Ֆրանսական Ծաղկաբաւնութեան երեք հատորները թողաւորական տպարանին մէջ տպել կուտայ, ու յաջորդ տարին Լամառք Գիտութեանց Ակադեմիան կ'ընդունուի: Իր որդին ճամբորդութեան զրկելու համար Պիւֆոն իբր առաջնորդ անոր կ'ընկերակցնէ Լամառքը, կառավարական յանձնարարութեամբ մը. կ'անցնէր այսպէս Հոլանտաէն, Գերմանիայէն, Հունգարիայէն ու յարաբերութիւններ կը հաստատէր Պէռլինի մէջ՝ Կլէտիչի, Վիէնայի մէջ՝ Ժաքէնի ու Կէօթէնկի մէջ՝ Միւրէյի հետ:

Ալամպէսի եւ Տիսոտյի սկսած Հանայնագիտարանը (Encyclopédie méthodique) աւարտած չէր, Լամառք անոր չորս հատորները գրեց, ուր նկարագրեց այն ատեն ճանչցուած բոլոր բոյսերը, որոնց անունները Ա էն P գրերով կը սկսէին. անհունապէս ընդարձակ գործ մը զոր աւարտեց Փուառէ, եւ որ ունի սասներկու հատոր, որոնք երեւցան 1783էն 1817: Ուրիշ աւելի կարեւոր գործ մը, որ հաւասարապէս մաս կը կազմէր Հանայնագիտարանին եւ որ միշտ կը յիշուի բուսաբաններէն, իբր խորագիր ունի Illustration des Genres (Բուսական սեռերու պատկերազարդ ներկայացում): Լամառք այդ գրքին մէջ կ'ընէ երկու հազար տետրու նկարագիրը, 900 պատկերներով զարդարուած, ինչ որ ցոյց կուտայ արդէն գրքին անունը: Բուսաբան մը միայն կըրնայ ճշմարիտ գաղափար մը կազմել այն անպին խուզարկութիւններու վրայ, որ ենթադրել կուտայ այդ տեսակ աշխատութիւն մը: Լամառք իր գործունէութեամբ ամէն բանի կը հասնէր: Եթէ ճամբորդ մը հասնէր Փարիզ՝ ինքը առաջինն էր որ զայն տեսնելու կ'երթար. 1781ին Սոնրոս Հնդկաստանէն կը վերադառնար բոյսերու ընդարձակ հաւաքածոյով մը. բացի Լամառքէն՝ ոչ ոք կը հաճի զանոնք տեսնելու երթալ. ու Սոնրոս, հիացած այդ փութկոտութեան վրայ, կը նուիրէ անոր իր այդ հոյակապ հաւաքածոն: Հակառակ այս անդադրուն աշխատութեան, Լա-

մատքի դիրքը չափազանց խախուտ էր : իր գրչովը կ'ապրէր : գրավածառներէ կախուցն ունէր : Թագաւորին Բուսարանին պահապան ըլլալու նիհար պաշտօնին մէջ իսկ մրցակիցներ ունեցաւ : Ինչպէս բնախոյզներէն շատեր՝ նոյնպէս Լամառք ամբողջ տասնըհինգ տարիներ կռուեցաւ կեանքի դժուարութիւններուն դէմ : Բազմաւոր դէպք մը բարեփոխեց իր դիրքը՝ փոխելով իր աշխատութիւններու ուղղութիւնը : Քոնկլանիօնը (Ազգային սահմանադրական ժողով Ֆրանսայի՝ 1792ին) կը կառավարէր երկիրը : Քառնոյ յաղթանակը կը կազմակերպէր : Լաքանալ բնապատմական գիտութիւնները կազմաւորելու ձեռք կը զարնէր : Իր առաջարկութեան վրայ Բնապատմութեան Միւզէօմը հիմնուեցաւ : Կրցան բոլոր բեմերու դասախօսները ձարել , բացի կենդանաբանական բեմէն . բայց խանդավառութեան այդ ժամերուն մէջ Ֆրանսան կը գանէր պատերազմիկներ եւ գիտնականներ , ամէն տեղ , ուր անոնց պէտքը կը զգար : Էթիէն Ժօֆոուա Սէնթիլէն քսանըմէկ տարեկան էր . հանքաբանութեամբ կը զբաղէր : Տօպանթոն իրեն կ'ըսէ . «Յանձն կ'առնեմ ձեր անփորձառութեան պատասխանատուութիւնը . ես ձեր վրայ հօր մը հեղինակութիւնը ունիմ , համարձակեցէք կենդանաբանութեան ուսուցումը յանձն առնել եւ օր մը թող կարենան ըսել թէ դուք զայն Ֆրանսական գիտութիւն մը զարծուցիք» : Ժօֆոուա կ'ընդունի եւ կը ստանձնէ բարձրագոյն դասակարգի կենդանիները : Լաքանալ տեսաւ , սակայն որ դասատու մը անբաւական էր կարենալ կարգաւորելու համար ամբողջ կենդանական թագաւորութիւնը՝ հաւաքածոներու մէջ : Ժօֆոուա միայն ողնաւորները դասակարգելու պարտաւորուած ըլլալով , անողնաւորները կը մնային , այսինքն միջատները , կակղամորթերը , որդերը , վերջապէս անձանօք քառսը : Լամառք , կ'ըսէ Մ. Միշլէ , ստանձնեց անձանօթը : Քիչ մը Պուիկիէռի հետ զբաղած էր խեփորներով (coquille) . բայց ամէն ինչ սորվելու էր , լաւ եւս ըսելով , այդ անձանօթ աշխարհին մէջ , ամէն ինչ ըստեղծելու էր , ուր Լիւննէ հրաժարած էր , եթէ կարելի է այսպէս ըսել , մտցնել միեւնոյն կարգը ինչ որ հաստատած էր բարձրագոյն դասակարգի կենդանիներուն մէջ : Լամառք 1794ի գարնան իր դասախօսութիւնը սկսաւ , Միւզէօմին մէջ , մէկ տարի պատրաստուելէ յետոյ , ու այն ատենէն

ստեղծեց կենդանական երկու մեծ բաժանումները, ողնա-
ւորները, որոնք մնացին գիտութեան մէջ: Պահելով ող-
նաւոր կենդանիներու համար Լիննէի ստնաւորներու,
թռչուններու, սողուններու եւ ձուկերու բաժանումը,
զասակարգեց անողնաւորները՝ կակղամորթերու, միջատնե-
րու, որդերու, սայրամորթերու եւ փոշխիներու (polype)
բաժանումին մէջ: 1799ին ողորկապատեաններու (crustacées)
կարգը բաժնեց միջատներէն, որոնց հետ այդ վերջինները
ձուլուած էին: 1800ին հաստատեց սարգազիները (arachnides),
սարքերելով միջատներէն: 1802ին որդերու մէջ օղակա-
ւորները, եւ փոշխիներու մէջ ճաճանչաձեւները (radiaires):
Ժամանակը նուիրագործեց այս ստորաբաժանումներու օրի-
նաւորութիւնը, որոնք հիմնուած էին կենդանիներու գոր-
ծարանաւորութեան վրայ:

Աւարտենք Լամառքի կենսագրութիւնը: Հաստատուած
իր գիտական վարանանքներուն մէջ Միւլդէօմըն բերումով
եւ հաւաքածոները կարգաւորելու պարտականութեամբ,
հոգևով մարմնով ձեռնամուխ եղաւ այդ կրկին աշխատու-
թեան: 1802ին հրատարակեց իր Կենդանի մասրիներու
գործարանաւորութեան վրայ նկատողութիւնները, 1809ին իր
Կենդանաբանական Փիլիսոփայութիւնը, առջինին կատա-
րելագործումը, եւ 1816էն 1822 Անդալուսի կենդանիներու
Բնապատկերները եօթը հատոր. այս վերջինը իր գլխաւոր
գործն է, եւ որովհետեւ մինակ նկարագրական է, ընդու-
նուեցաւ գիտնականներու միահամուռ գնահատութեամբը:
Իր Տեղեկագրութիւնը Փարիզի շրջականներու խեփորներուն
վրայ, ուր՝ իր կենդանի խեփորներու վրայ ունեցած խո-
րին հմտութիւնը ապահովարար իրեն թոյլ տուաւ կարգա-
ւորել անոնք եւս որ բեկորներն էին միայն հազարաւոր
զարերէ ի վեր անհետացած կենդանիներու, հաւասարապէս
պտաւ լաւ ընդունելութիւն մը: Լամառք կենդանաբանական
ուսումը սկսած էր երբ 50 տարեկան էր, խոշորացոյցով
եւ մանրագիտակով միայն տեսանելի փոքրիկ կենդանինե-
րու մանրաքննին ուսումնասիրութիւնը նախ յոգնեցուց՝
յիտոյ տկարացուց իր աչքերը: Տակաւ առ տակաւ այն
ամպերը որ զանոնք կը մթափնէին թանձրացան, ու Լամառք
բոլորովին կոյր կը զանայ: Չորս անգամ ամուսնացած,
հայր եօթը զաւակներու, սպառեց իր արգէն նիհար մի-
ջոցները եւ փոքրիկ խնայողութիւնները: Դասատուի իր

համեստ թոշակն էր միայն որ զինքը թշուառութենէ ազատ կը պահէր: Գիտութեանց բարեկամները, որոնք իր իբր կենդանաբան եւ բուսաբան համբաւը լսելով մօտը կուգային, անակնկալ մը կ'ունենային տեսնելով անոր անկեալ վիճակը. իրենց կը թուէր թէ լուսամիտ կառավարութիւն մը պարտաւոր էր աւելի խնամքով տեղեկանալ եւ զբաղիլ ծերունիի մը զրութեամբ, որ իր երկիրը փառաւորած էր: Բայց կառավարութիւնները, այդ բանը յայտնի է, իրենց չնորհները ուրիշ ծառայութիւններու կը վերապահեն, ու կոյր գիտնական ծերունիի մը թշուառութիւնը հազիւ թէ հրաւիրէ իր վրայ անոնց հոգածութիւնը: Լամառք իր կենաց վերջին տասը տարիները անցուց ուրեմն խաւարին մէջ ընկղմած, երկու աղջիկներուն խնամքովը շրջապատւած միայն: Ասոնցմէ երէցը՝ զրեց անոր թելադրութեան տակ, մաս մը Անողնաւոր կենդանիներու քննապատմութեան վեցերորդ եւ հոթերորդ հատորներէն: Այն օրէն երբ հայրը սենեակէն դուրս չէր ելլեր, աղջիկը եւս տունէն դուրս չէր ելլեր. երբ այս վերջինը օր մը դուրս կ'ելլէ՝ ազատ օդին ազդեցութեան տակ կը հիւանդանայ. այնքան որ կորսնցուցած էր զայն լիաթոք ծծելու սովորութիւնը: Լամառք մեռաւ 1829 զեկտեմբեր 18ին, ութսունըհինգ տարեկան հասակին մէջ. Լաթոէյլ եւ տը Պլէնվիլ եղան իր յաջորդները Միւզէօմին մէջ:

Իր երկու աղջիկները առանց հասոյթի մնացին, իր մահէն յետոյ: Եթէ լինէին նախարարի մը կամ զօրավարի մը աղջիկները, երկու քոյրերը կառավարութենէն թոշակ պիտի ստանային. բայց իրենց հայրը մեծ քնախոյզ մըն էր, որ մեծարած էր իր երկիրը թէ ներկային եւ թէ ապագային համար, պէտք էր որ անոնք մոռցուէին ու, իրօք, մոռցուեցան ալ:

ՇԱՌԼԸ ՄԱՌԹԷՆ

(Նախարան Լամառքի

Կենդանաբանական փիլիսոփայութեան)

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒԻԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տես Հանդիսարան, էջ 121 թիւ 4)

21. Սիրտը եւ վիրաբուժութիւնը. — Քանի մը տարիներ առաջ դեռ, վիրաբուժական աշխարհը ինքզինք անկարող կը զգար սրտին վրայ առաջ եկած վէրք մը դարմանելուն մէջ: Բայց այսօր այն վիրաբուժը որ ծալապատիկ կը նստի, գնդակի կամ դանակի հարուածով մը վիրաւորուած սրտի մը առջեւ՝ անպարտաճանաչ կը համարուի: Բաւական թուով փորձեր, որ կատարուած են վերջին ժամանակներս, այդ ճամբով, ապացուցած են որ կարելի է կուրծքը բանալ, սիրտը շոշափել, անոր վէրքը գտնել ու զայն ասելով ու թելով կարել, ինչպէս պիտի կարէին մորթին վըրայ դոյացած դանակի կամ գնդակի բացած վէրք մը: Գործողութիւնը սակայն խիստ փափուկ է. երբ մտածենք որ սիրտը մորթին տակ չի գտնուիր անմիջապէս, եւ թէ անոր վրայ բացուած վէրք մը արեան կոհակներու առիթ կուտայ, ըլլալով շրջանառութեան շարժիչ գործարանը: Եթէ կուրծքին ոսկորները կտրելով լայնօրէն, կարելի ըլլայ սրտին հասնիլ, զարձեալ դժուարութիւններ չեն պակսիր: Ինչպէս գտնել ու կարել վէրքը եթէ այս վերջինը ետեւի կողմը կը գտնուի: Այդ պահուն յանդգնօրէն վիրաբուժը երբ բռնէ սիրտը, զայն կը վերցնէ, առաջ կը քաշէ ու կը յաջողի այսպէս կարել վէրքը ու արիւնէրթութիւնը կեցնել: Յաճախ հիւանդը կը մեռնի. բայց սեսնուած է որ այդ բանը գործողութեան հետեւանքը չէ, այլ նախապէս առաջ եկած թարախանքի մը, լանջաթաղանթին կամ սրտսկրանքին (péricarde) մէջ: Ու միշտ հաստատուած է որ կարուած սիրտը կատարեալ սպիացումի ճամբուն մէջ մտած է:

Տասնըփնից տարեկան աղջիկ մը ատրճանակի հարուած մը կուտայ իր սրտին կողմը: Հիւանդանոց կը բերուի ծանր վիճակի մէջ, սոսկալի արիւն կորսնցնելով: Պէտք էր արիւնը դադրեցնել: Կուրծքը կը կտրեն, թոքերը մէկ կողմ կը քշեն, կը ճեղքեն սրտակրանքը եւ սրտին առջեւի մասին վրայ, ծայրին մօտիկը, կը նշմարեն մէկ սանթիմետր երկայնութեամբ վէրք մը: Ատկից էր որ գնդակը մտած էր,

զոր պէտք էր հանել. բարակ ասեղ մը կը ներմուծեն հոն եւ կը փնտռեն դայն՝ սրտի գաւիթին ամէն կողմերը: Ոչ մէկ արդիւնք: Վիրաբուժը սիրտը ձեռքին մէջ կ'առնէ, կը շօշափէ զօրաւոր կերպով՝ գնդակը զգալու համար, բայց ի զուր: Այսպէս ճնշուած սիրտը, բնաւ չի դադարիր կծկելէ. բայց փոխանակ սովորական կծկումի՝ ծածանող շարժում մը ունէր:

Սրտին վրայ այս կարգի գործողութիւն մը կատարել սակայն, այսօր, վիրաբուժի մը ճարպիկութեան արժանիքը ցոյց կուտայ միայն որուն վրայ միայն կրնանք հիանալ, ինչպէս երբեմն հիացած էինք երբ ստամոքսին, լեարդին կամ ուղեղին վրայ այդօրինակ գործողութիւն մը կը կատարուէր: Ինչ որ աւելի հետաքրքրական է, գոնէ ներկայիս մէջ, եւ աւելի յանդուգն, այն փորձն է որով կ'ուզուի վիրաբուժօրէն դարմանել սրտի բժշկական հիւանդութիւն մը:

Չորս չարաթ առաջ պ. Թիւֆիէ այդ ճամբով դարմանելու փորձի մը կը ձեռնարկէ, այսինքն մայր-շնչերակին (aorte) վրայ գոյացած անեփրիզի (ծաւալում շնչերակի նրբորմին) մը պարկը կապելով (ligature):

Ի՞նչ է մայր-շնչերակային ծաւալում մը: Կը պատահի շատ անգամ որ այդ խոշոր խողովակի նրբորմին մէկ կէտը կորսնցնէ իր տոկունութիւնը եւ առաձգականութիւնը: Արեան մղումին տակ, այդ մասը տեղի կուտայ, կ'ընդլայնի եւ վերջ ի վերջոյ կը կազմէ տեսակ մը պարկ որ ըստ բաւականի լայն ծակով մը կը հաղորդակցի մայր-շնչերակին հետ: Երբ մէկ անգամ կազմուած է անէվրիզմը՝ կեանք մը կ'ուսնենայ, գրեթէ անկախ եւ երբեմն, ինչ որ խիստ վճռանգաւոր է, կը վերածուի քանսէրային բնոյթ ունեցող ուռոյցի մը: Անընդհատաբար իր ծաւալը խոշորցնելով կը սեղմէ թոքերուն եւ ջիղերուն վրայ, կը մաշեցնէ ոսկորները, կրծոսկրը, կողը, ողնը եւ կուգայ ծայր տալ մորթին տակ, եթէ միայն մինչեւ այդ վայրկեանը չի պայթի եւ հիւանդը յանկարծական արիւնհերթութեան մը մէջ կայծակնահար չ'ընէ:

Ահաւասիկ թէ ինչպէս այդ կարգի դէպքի մը պահուն պ. Թիւֆիէ կը փորձէ անէվրիզմը հանել: Ծեր կնոջ մը լանջքին

տակ արդէն անէվրիզմի պարկը ծայր տուած էր: Բժշկական ամէն դարման անկարող կ'ըլլար նոյն իսկ ցաւերը մեղմելու եւ իւրաքանչիւր վայրկեան անոր պայթռումին կը սպասուէր: Պ. Թիւֆիէ կ'որոշէ վերջապէս վիրաբուժական գործողութիւն մը կատարել: Կը կարէ լանջքին այդ մասը եւ կը գտնէ անէվրիզմը, որուն ծայրայեղ բարակ պատերը շփոթուած էին թոքերուն, կողերուն, դնդերներուն հետ: Վերջին ծայր ուշադրութեամբ կամաց կամաց կ'առանձնացնէ արևնային ուռոյցը՝ մտաւոր գործարաններէն: Յետոյ երկու ձեռքերուն մէջ առնելով զայն, կը սեղմէ մեղմօրէն եւ անոր պարունակած բոլոր արիւնը մայր-չնչերակին մէջ կը մղէ: Տեսակ մը դատարկ պարկ մնացած էր իր ձեռքը այդ պահուն, որ ծակով մը միայն խողովակին հետ կը հաղորդակցէր: Թեւ մը կ'անցնէ անոր շուրջը, խողովակին կարելի եղած մտաւորութեամբ, մը եւ ամրապէս կը կապէ: Խողովակին եւ անէվրիզմին հաղորդակցութիւնը այսպէս ջնշուած ըլլալով՝ գործողութիւնը աւարտած էր: Ամբողջ տաք օրեր կարելի էր հիւանդը բոլորովին առողջացած նկատել: Տասնըմէկերորդ օրը սակայն կ'ենթարկուի սոսկալի արիւններթուծեան զոր կասեցնել անկարելի կ'ըլլայ եւ հիւանդը կը մեռնի: Երբ դիակազմանութիւն կը կատարուի կը տեսնուի որ անէվրիզմի դատարկ պարկը կանկոնեւ եղած էր, որ տարածուելով մինչեւ խողովակը թելին փրթելուն տեղի տուած էր եւ հետեւաբար արեան խողովակին բացման ու արիւններթուծեան: Ինչպէս պ. Թիւֆիէ կ'ըսէ, շատ մեծ հաւանականութիւն կար որ հիւանդը բոլորովին բժշկուէր եթէ անէվրիզմի պարկը կտրուէր հանուէր:

Անզգիական թերթի մը մէջ տօք. Լօտէո Պոէօնիսին վերջերս խնդիր կը հանէ թէ վիրաբուժօրէն կարելի՞ է սրտի հիւանդութիւն մը, ինչպէս կրկնադոնակային կրծկուամը (rétrécissement mitral), բժշկելու: — Նախ ի՞նչ է այդ հիւանդութիւնը:

Իրտինք որ սրտին ձախ բարակը (oreillette) եւ ձախ փորոքը (ventricule) կը հաղորդակցին իրարու հետ ծակով մը, որ կը կոչուի երկդոնակային մուտք, որուն երկու դոնակները թոյլ կուտան արեան անցքը ըլթակէն փորո-

քին մէջ: Քանի մը հիւանդութիւններու հետեւանքով, ինչպէս ռիւմաթիզմը, կը պատահի որ նեարդային արտազրութիւններ այդ երկու դանակները իրարու փակցնեն եւ նեղցնեն այսպէսով այդ մուտքը: Արիւնը հետզհետէ դժուարութեամբ կ'անցնի փորոքին մէջ, ու լճանալով կը ճնշէ թոքերուն եւ ձախ սրտին գործողութեան վրայ, իբր հակահարուած լեարդի եւ ուրիշ բորբոքումներ առաջ կուգան: Զայդ ունեցող հիւանդներու վիճակը խիստ ցաւալի է, որովհետեւ յաճախ կը պատահի որ բժիշկը ո՛ր եւ է դարման չի կրնար ընել նոյն իսկ ցաւերը մեղմելու համար: Փոքրիկ շարժումն իսկ անդի կուտայ անոնց մէջ զարաւոր դժուարաշնչութեան ու այսպէս անոնք անկողնին դատապարտուած կը մնան, ուր կ'անցնեն իրենց կեանքը ոտքերը ուռեցած եւ շրթունքները կապուացած: Այս վիճակը վերջին ծայր կը յուզէ զանոնք մէկ անգամ տեսնողները իսկ: Քանի որ բժիշկները անկարող են այդ հիւանդութեան պահուն բան մը ընել, յանդուգն է՝ մտածել թէ վիրաբուժը կրնար այդ հրաշքը գործել: Ահաւասիկ սօք: Պրէօնթոնի դրած հարցը: Վերջապէս երկդոնակային կծկումին մէջ հիւանդութիւնը նմանութիւն ունենալէ հետի չէ ստամոքսի ստորին անցքին (pylore) հետ: Այս վերջին պահուն ի՞նչ կ'ընէ այսօր վիրաբույժը: Կը բանայ ստամոքսը, կը կտրէ կարծրացած օղակը, որ կը նեղցնէ այդ ելքը, ու նորէն կերակուրները ստամոքսէն ազիք կ'անցնին ազատ կերպով: Առանց բանալու սիրտը՝ միթէ կարելի չէ՞ իրարու փակած դանակները կտրել եւ վերստին թափանցելի դարձնել երկդոնակային մուտքը:

Փորձերը իրաւունք տուած են այս ենթադրութեան. վիրահատով (bistouri) մը, որուն ծայրը հիւսելու ասեղէ մը խոշոր չէր, կը յաջողին, կենդանիներու վրայ, կտրել այնքան դանակները որքան երկդոնակային մուտքը: Այդ բանին համար բաւական է գործիքին ծայրը փորոքին մէկ որոշ կէտին մէջ ներմուծել եւ երբ սրտին կը հասնի, զայն ուղղել զարձեւալ որոշ ուղղութեամբ մը կտրելու համար երկդոնակային մուտքին փոքր ի շատէ կարծր դանակները, որոնց դիմադրութիւնը խիստ լաւ կարելի է գնահատել: Երբ վիրահատ դանակը հանուի, սրտին մէջ յառաջ եկած վէրքը չարիւհիւր այլեւս: Միեւնոյն արդիւնքը ձեռք բերուած է մարդոց դիակներուն վրայ:

Բայց կենդանի մարդոց վրայ տակաւին փորձեր չեն կատարուած, ու միեւնոյն բժշկին կարծիքով հիւանդ մը որ մահուան կը սպասէ չարչարուելով, երբ գիտակից ըլլայ իր ճշմարիտ վիճակին, պիտի չյամենայ կամենալ այդ վերջին փորձին մէջ փնտոել իր փրկութիւնը:

— Բայց երբ մտածենք որ այսօր վիրաբուժութեամբ կը գարմանուին շատ մը հիւանդութիւններ, որոնց բուժումը երբեմն հրաշք պիտի ընդունուէր, կը փորձուինք մտածել որ սրտի եւ ուրիշ նմանօրինակ հիւանդութիւններ ալ մօտաւոր ապագայի մը մէջ վիրաբուժին հասողութեան մէջ պիտի գտնուին: Ըսինք սակայն, որ վերեւ բացատրուած փորձերը տակաւին հեռու են գոհացուցիչ արդիւնքներ նկատուելէ:

22. Բժշկութեան ուսանողներու թիւը Ֆրանսայի մեջ՝ 1902 թուին. — «Սրմէն Մէտիքալ» Ֆրանսայի մէջ օտար եւ ֆրանսացի բժշկական ուսանողներու թիւերը արձանագրող հետեւեալ պաշտօնական ցանկը կուտայ:

Բժշկական Հասարակարգներ	Ֆրանսացի	Օսար
Փարիզ	3142	419
Պոռտո	649	16
Լիլ	246	16
Լիոն	1006	66
Մոնփէլիէ	353	188
Նանսի	238	32
Թուլուզ	389	16
	6023	753
Բժշկական վարժարաններ	1095	11
	<u>7118</u>	<u>764</u>

Եթէ համեմատուի այս ընդհանուր գումարը նախորդ տարիներու բժշկական ուսանողներու թուոյն հետ՝ պիտի տեսնուի որ 1896էն ի վեր արձանագրուած ուսանողներու թիւը միշտ նուազած է: Այսինքն անկից ի վեր երբ P. C. N. ի (Sciences physiques & naturelles) նախապատրաստական կամ յաւելուածական տարին հաստատուեցաւ՝ բժշկական ուսումներու վրայ: Մանաւանդ այս տարի օտար ուսանողներու թիւը համեմատապէս չափազանց նուազած է: Մինչև 1901 թուականը՝ օտարներու նուազագոյն թիւը եղած էր 817, մինչ այս տարի 764 միայն:

Թուրքիացի ուսանողներու թիւը յարատեւ նուազումի ենթարկուած է, վերջին հինգ-վեց տարիներու մէջ, այսինքն 151, 138, 131, 121, 118 եւ 1902ին 98ը միայն:

«Սըմէն Մէտիքալ» չարաթաթերթը խօսելով օտար ուսանողներու վրայ կը կարծէ թէ այդ նուազումը նոր շըրջաբերականին հետեւանքը չէ, որով կ'արգիլուի օտար ուսանողներու բժշկութիւնը ի դորձ դնել Ֆրանսայի մէջ. որովհետեւ, կ'ըսէ, այդ ճամբով արձանագրուողներու թիւը նուազած չէ վերջին տարիներուս մէջ՝ այլ, ընդհակառակը, աւելցած է: Ու կը հետեւցնէ թէ այդ երեւոյթը ապացոյց մըն է թէ Ֆրանսական բժշկական տնօրէնը միշտ յարդի է, եւ ամէն սեղ կը փնտռուի:

Սակայն չարաչար կը սխալի, մոլեռանդ ֆրանսացի թերթը, Ինչո՞ւ ինքզինքը կը խափէ ու հաշուի չ'առնե՞ր՝ թէ երբ այդ արգելքը գոյութիւնն չունէր, երբեմն արձանագրուող օտար ուսանողներու այն թիւը աւելի քիչ էր որոնք ուղղակի ֆրանսական լիսէի մը տիփլոմով կը ներկայանային, քան թէ այսօր, բժշկութիւնն ուսանելու համար՝ միեւնոյն իրաւունքներով ինչպէս ֆրանսացիները: Օտարներու թիւը կը նուազի, որովհետեւ անոնց համար նիւթական անյաղթելի դժուարութիւններ կան Ֆրանսայի լիսէները յաճախելու նախ ու յետոյ բժշկական համալսարան մտնելու համար: Ու օտարներու այդ նուազումը աւելի արձամարձանքի նշան է, դէպի Ֆրանսայի բժշկական համալսարանները, քան թէ օտարներու մտաւորական անպատրաստ վիճակին: Ու «Սըմէն Մէտիքալ»ը, իրաւամբ, իր կարծատեսութիւնը կ'ապացուցանէ, երբ այդ կէտին մէջ իր ազգային արժանապատուութեան բարձրացումին ճարը կը փնտռէ, քանի որ քան երբեք՝ այսօր օտար երկիրներու կրթական հաստատութիւնները չափազանց յառաջադէմ վիճակի մը մէջ կը գտնուին:

23. Անձրեւ՝ արհեստական լիջոցներով. — Ամերիկեան գիտական թերթ մը կը ծանուցանէ թէ ելեքտրականութեամբ անձրեւ արտադրելու համար փորձեր եղած են վերջերս Ճարսոնի մէջ: Փորձերու կազմակերպութեան մանրամասնութիւնները կը պակսին, բայց անոնց ցարդ տուած արդիւնքին վրայ ահաւասիկ թէ ինչ կը հաղորդէ յիշեալ թերթը. «Իորժողութիւնները սկսան իրիկուան ժամը 11ին, մինչեւ յաջորդ առաքուան ժամը 9ը միջնորոտական փոփոխութեան ոչ մէկ նշան չտեսնուեցաւ: Յետոյ միայն հետզհետէ նշմարուեցաւ ամպերու կուտակուելը՝ այն բլուրին վրայ, ուր փորձը կը կատարուէր, ու քիչ վերջ անձրեւը սկսաւ բաւական երկար ժամանակ տեղալ: Երկրորդ

տարախ մը սկսաւ ժամը 11ին, յետոյ երբորդ մը, չորրորդ մը ու այս վերջինը իրիկուան ժամը 9 ու կէսին: Այն տարածութիւնը զոր արհեստական անձրեւը ոլողած էր շատ մը քիլոմետրներու կը հասնէր: Նոյն փորձերը մտեւրըս պիտի կրկնուին:»

24. Ուղեղային կիսագունդերէն զրկուած *) աղաւնիի մը կրքուները — Բնախօսական համաժողովի մը հետեւեալը հազորդուած է: Աղաւնիի մը ուղեղային երկու կիսագունդերը հանուած էին, ու ինչպէս ուրիշներ, որոնք միեւնոյն գործողութեան ենթարկուած էին, սնշարժ կը մնար եւ խիստ քիչ անգամ հազուադիւր շարժումներ կ'ընէր: Պատրաստած էին անոր համար ապահեայ փոքրիկ սենեակ մը ուր կը կենար ան 20 սանթիմետր մակերեւոյթ ունեցող տախտակի մը վրայ, որ զետեղուած էր 12 կամ 15 սանթիմետր բարձրութիւն ունեցող փայտէ գլանի մը վրայ: Հասկնալու համար թէ կարող էր սորվելու, կը հեռացնեն զայն իր յենարանէն, յետոյ կը մղեն դարձեալ դէպի յենարանը, որպէս զի փորձէր վրան ելլել: Երբ վար կ'իյնար զայն իր տեղը կը դնէին, իւր թէ վարձատրէին այսպէսով իր թափած ճիգը: Տասնընէնգ օր վերջ՝ յաւաջդիմած էր արդէն: Գարձեալ, փոխանակ աղաւնիին իր սենեկիկին մէջ իր յենարանին առջև դնելու, զայն դուրս կը հանեն, աւելի մեծ հեռաւորութեամբ մը: Աղաւնին այդ ատեն կը սկսի թռչիլ եւ կը սորվի թռչիլ մինչեւ իր սենեկիկը եւ յետոյ ցատկել իր յենարանին վրայ: Քիչ քիչ հեռաւորութիւնը կը շաացնեն, 5 ակն սանթիմետրով միայն ու կը յաջողին մինչեւ մէկ մետր հեռաւորութեան հասնիլ: Փամանակին հետ, վերջապէս, յառաջդիմութիւնը աւելի նշանակելի դարձաւ: Աղաւնիին կտրած միջոցը մինչեւ 8 մետրի հասաւ: 9 ամիս կրթութենէ մը վերջ աղաւնին կը մեռնի, առանց կարենալու սորվեցնել իր յենարանը թողլու սովորութիւնը: Սակայն ինչ որ ստուգուեցաւ այն է որ երեք շաբաթի կրթութեան ընդմիջում մը անոր ստացած կրթութեան մէջ ոչինչ մոռցընել տուաւ, ու կենդանին կատարեց՝ իր դէպի յենարանը վերադարձը ըստ սովորութեան եւ առանց վարանանքի: Եղած էր աւելի աշխոյժ եւ աւելի անհնադանդ. բայց, ինքնաբերաբար, ո՛չ կերաւ եւ ոչ խմեց:

*) Ուղեղային կիսագունդերու կատարած դերին վրայ կարգալ, այս առթիւ, Հարնայարուսնի Ս. շրջանին մէջ հրատարակուած յօդուած մը. — Տես Ս. շրջան, էջ 410, Ուղեղային կիսագունդերու Դերը: Ծ. Խ.

25. Կոյու կարին ժառանգական յասկութիւնները. — Առէն մարդ գիտէ որ սնունդը մեծ դեր կը խաղայ կովուն կաթին յատկութեան ու տեսակին մէջ. այս կամ այն սնունդը կ'օգնէ կաթին լաւ յատկութիւններու աճելուն՝ մինչդեռ ուրիշ մը ո՛չ: Սնունդանիւր արհեստ մը կայ զոր պէտք է ճանչնալ, շատ եւ լաւ կաթ ստանալու համար: Բայց սնունդը չէ որ միշտ կարեւոր դերը կը խաղայ. կան նաեւ ուրիշ պարագաներ եւ պայմաններ որ կրնան եւ կարող են բարերար ներգործութիւններ առաջ բերել. կենդանին նախ ինքնին ամէնէ կարեւոր դերը խաղցողն է: Այս կովը տրամադրուած է լաւ եւ շատ կաթ տալ մինչդեռ այն միւսը ո՛չ, եթէ նոյն իսկ ամէնէ յարմար եւ պատշաճ եղանակովը սնուցուի: Դարձեալ կովերու այս մասնաւոր ընդունակութիւնը ժառանգական է. յատկութիւնը կը փոխանցուի մէկ ծնունդէ միւսը: Ահաւասիկ թէ ինչ կ'ըսէ Լայիցիի Լոզագործական բարձրագոյն վարժարանի փրօֆէսէօրներէն, պ. Քիչնէո, — կաթին յատկութեան ժառանգականութիւնը անվիճելի իրողութիւն մըն է. կաթընտու մասնաւոր ցեղեր կան, որոնցմէ ոմանք ունին լաւ յատկութեամբ կաթ. ուրիշներ, որոնց քով թէեւ այդ յատկութիւնը չեղտուած չէ, սակայն ունին մեծաքանակ կաթ: Բազմաթիւ զուգանորուններէ արտադրուած կովերու մէջ, որոնք իրենց հայր ունեցած են Եաքի եւ Քայեալի եզները եւ մայր սպանդանոցի հասարակ կովեր, տեսնուած է որ կաթը թէեւ իւր քանակութիւն ոչ աւելի՝ սակայն իւր որակ խիստ բարձր էր հասարակ կովու կաթէն: Եաքի արտադրած կովը ունենալով համահասար քանակութեամբ կաթ իր մօր բաղադրամամբ, կը ժառանգէր իր հօրմէն անոր ցեղին յատկութիւնները, իր կաթին մէջ պարունակուած նիւթերուն համեմատութիւնը բարձրացնելով, 14,35 — 16,4 առ 100 չոր նիւթ, 5,20 — 6,63 առ 100 իւղային նիւթ, որքան չունէր իր մօր կաթը: Ուրեմն ընտրանքով կարելի է բնական ձգտումը զօրացնել: Ուրիշ մը իր կովերը կ'ընտրէ անոնց կաթը վերլուծելով, եւ կը կարողանար երեք տարուան մէջ կաթին իւղային նիւթերը 2,5 — 2,69 առ 100 ձոխացնել:

Միւսնոյն փորձերը կը կրկնէ պ. Քիչնէո ինքն եւս եւ միեւնոյն եղբակացութեանց կը հասնի: Յեղային ժառանգականութեան խաղցած այս կարեւոր դերը խաչնապահներու ուշադրութեանը հրաւիրելու է: Կենդանաբուծութիւնը, դարձեալ կը դառնայ այսպէս գիտութիւն մը. զայն առաջնորդելու է ուրեմն գիտական եւ կենսաբանական մեթոտներով:

ՎԵՐՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐ ՈՒ ԳՐԳԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

ՄՈՒՐՃ ԵՆ ՀԱՄԱԿՍԱՐԱՆ . — Մուրճ նկատողութեան առած է Հանայարանի Բ. Թիւին «Հայ կղերը եւ Գիտութիւնը» խմբագրական յօդուածը, իր այս տարուայ փետրվարի համարին մէջ : Թիֆլիզեան հանդէսը այդ յօդուածին վեց էջերէն անջատելով քանի մը տող միայն՝ կը կոթնի անոնց յայտարարելու համար թէ «Շատ խղճուկ դատողութիւններ են սրանք, լոկ մի շողոքորթուած խմբագրութեան երեւակայութիւն, որի դէմ բողոքում է ինքը, պատմութիւնը :» Պատմական խնդիրներու վիճաբանութեանց մէջ եթէ փաստերը աւելի նախամեծար չհամարուէին քան թէ լուսանքները մենք ալ պիտի կրնայինք ըսել . «Շատ խղճուկ նախատինքներ են սրանք, լոկ մի քինախնդիր խմբագրութեան երեւակայութիւն, որի դէմ բողոքում է ինքը, ճշմարիտ կացութիւնը :» Ո՞չ ապաքէն Վեհափառ Հայրապետին նկատմամբ կովկասեան հրապարակազիրներէն ոմանց զգացումները հանրածանօթ են : Բայց մենք քարընկեցութեան առիթներ չենք փնտռեր, ու փափաքելով որ Մուրճի պէս լուրջ ամսագիր մը, պատմական խնդիրներու վիճաբանութեանց մէջ, նախատինքը փաստի տեղ դործածելու սխալը չերկրորդէ, կը մանենք ուղղակի խնդրին մէջ :

Մուրճ համակարծիք չերեւիր Հանայարանի «Հայ կղերը եւ Գիտութիւնը» յօդուածին : Կը յայտարարէ թէ «Հայ կղերականութիւնը ընդհանրապէս եզել է նոր մտքերի, նոր ուղղութիւնների անհաշտ թշնամի :» Ու այս առթիւ թերթիլ կը յանձնարարէ Արտվեանի, Ոսկանի, Նազարեանցի հրատարակութիւնները, որոնք մեզի ցոյց պիտի տան «գիտութիւնը սպանուած նոյն հայ կղերականութեան ձեռքով» : Շատ շատ, ըստ Մուրճի, հայ կղերին մէջէն մէկ երկու հոգի կրնան լաւ ըլլալ «բայց այդպէս հիացմունքով խօսիլ ամբողջ կատայի մասին աւուուազն ծիծաղելի է» : Իսկ առ առաւելն :

Մուռն չի յիշատակեր սակայն Գրիգոր Արծրունին: Հանգուցեալ մեծանուն հրապարակագիրը մեզի աւելի ժամանակակից է ուստի եւ իր տեսութիւնները աւելի մօտէն ուսումնասիրելու գիւրութիւնը ունեցած ենք: Մշակի հիմնադիրը Արտվեանէն, Ոսկանէն, Նազարեանցէն ետքը եկած ըլլալով, բնականաբար անոնց տեսութիւնները քննած, սրբագրած եւ նոր եզրակացութիւններու յանգած է. ու այդ նոր եզրակացութիւններով է որ, երեսուն տարիէ ի վեր, եկեղեցական խնդիրներու մէջ կ'առաջնորդուին կովկասի հայերը:

Գրիգոր Արծրունին յառաջդիմութեան պայքարը ոչ թէ եկեղեցականութեան դէմ մղեց, այլ՝ պահպանողականութեան, որուն ներկայացուցիչները աշխարհականներ էին ու են: Քառորդ դարէ մը ի վեր կովկասի մէջ իրարու հետ կը կռուին աշխարհական յառաջդիմականներ եւ աշխարհական պահպանողականներ: Թէ մէկ եւ թէ միւս կուսակցութեան մէջ կը գտնուին հաւասարապէս եկեղեցականներ: Դիտել տանք, դարձեալ, որ ո՛չ յառաջդիմական թերթերը եկեղեցականներու կողմէն կը խմբագրուին եւ ոչ ալ պահպանողականները — կամ, ինչպէս անգին կ'ըսեն, «խաւարամիտները»: Կ. Պոլիս ալ պահպանողական ու յառաջդիմական թերթեր նմանապէս աշխարհականներէ կը խմբագրուին: Եկեղեցականութիւնը իրեն յատուկ թերթերը չէ ունեցած: Երբեմն Արմաշ Յոյս — Դրօշ Հայրենեաց — տիտղոսով հանգէս մը, Երուսաղէմ Սիօն մը ունեցան, բայց անոնց յարատեւութեանը պէտք չտեսնուեցաւ: Արարաքը Մայր-Աթոռոյ պաշտօնաթերթն է, բայց կասսայի բերան մը եղած չէ:

Երբ Կ. Պոլիս Սահմանադրութեան հաստատման կռիւններու թաաներալայր հանդիսացաւ, պայքարները մղուեցան աշխարհականներու միջեւ, — Լուսաւորեալներու եւ Խաւարեալներու: Երկու կուսակցութեանց մէջ ալ հաւասարապէս եկեղեցականներ գտնուեցան:

Բազմաթիւ օրինակներ առլու պէտքը չենք տեսներ: Հայ եկեղեցիին մէջ կղերը առանձին կասսա չի ներկայացըներ, Արեւմտեան-եկեղեցիին ըմբռնումով: Եւրոպայի կղերը ազգային չէ, այլ համազգային: Կղերականները քաղաքական ձգտումներ ունին, որոնք կրնան պետական շահերուն վնասել: Բայց հայ ազգին մէջ եկեղեցականներուն

շահերը բնաւ չեն տարբերիւր աշխարհականներու շահերէն :
 Հայ ազգը ինքն է իր եկեղեցին, կղերը իրմէն բզխած
 պաշտօնէութիւն մըն է : Որ եւ է նոր մտքի, նոր ուղղու-
 թեան բարեկամը կամ թշնամին ո՛չ թէ կղերն է՝ հապա
 հայ ազգը, ուրիշ խօսքով՝ հայ ազգին գաղափարական
 տարբեր տարբեր կուսակցութիւնները :

Դասակարգի խնդիրը այսպէս ըմբռնելէ յետոյ կրնանք
 «նոր մտքերի եւ նոր ուղղութիւնների» դէմ թշնամութեան
 ամբաստանութիւնը աւելի անկաշկանդ կերպով քննել :

Մուրճի հետ գիտակցօրէն վիճաբանելու համար, պիտի
 փափաքէինք որ նախ եւ առաջ մեզի մեկնէր թէ ի՞նչ հաս-
 կըցնել կ'ուզէ «նոր մտքերի եւ նոր ուղղութիւնների»
 բացատրութիւններով, եւ թէ հարկ անհրաժեշտ է որ հայ
 եկեղեցին ամէն «նոր միտք», ամէն «նոր ուղղութիւն»
 անպայման ընդունի : Լուսերականութիւնը նոր ուղղութիւն
 մըն էր, հայ եկեղեցին պէ՞տք էր որ զայն գրկաբաց ըն-
 դունէր : Տարվինականութիւնը գիտական նոր միտք մըն էր,
 բայց հայ եկեղեցին կրնա՞ր զայն դաւանիլ եւ ուսուցանել :

Եկեղեցին գիտութեանց ակադեմիայի մը հետ շփոթելու
 չենք : Իր կոչումը նոր մտքեր, նոր գաղափարներ քննել
 ու զանոնք ընդունիլ կամ մերժել չէ : Եկեղեցին աւանդա-
 պահ մըն է : Նոր մտքերը, նոր ուղղութիւնները կրնան
 անդադար իրարու յաջորդիլ, զիրար ջրել կամ հաստատել,
 ինչպէս գիտութեանց աշխարհին մէջ կը տեսնենք, բայց
 միթէ Հայաստանեայց եկեղեցին գոյութիւն կ'ունենա՞ր
 եթէ դարերու ընթացքին մէջ իր գուռը բաց ձգած ըլլար
 յարափոփոխ նորութեանց առջեւ : Ուշադրութենէ վրիպե-
 ցընելու չենք բնաւ, որ մեր եկեղեցին մեր ցեղին միա-
 քրական պահպանումին կենսական պայմաններէն մէկն է :
 Որպէսզի իր այդ անգնահատելի կոչումին ծառայէր, պէտք
 էր որ հաստատ հիմերու վրայ կանգուն մնար : Ու հաստա-
 տուն հիմեր երբեք չենք կրնար յարափոփոխ նորութեանց
 վրայ զետեղել :

Կ'ըմբռնենք որ Հայոցմէ պահանջուի բնաւ կրօնք չու-
 նենալ, բայց չենք կրնար ըմբռնել միշտ նորութիւններու
 հոսանքին ենթարկուող եկեղեցի մը պահանջել :

Այս ընդհանուր նկատողութիւնները ընելով հանդերձ
 ընդունելու ենք որ ո՛չ հայ եկեղեցին, ոչ հայ կղերը ար-
 զեղք հանդիսացած են հայոց մէջ գիտութեանց ծաւարման :

Բայց այդ գիտութիւնները «Հաւատամք» ին տեղը դնել չեն ուզեր, — թողունք որ չեն ալ կրնար: — Յանցաւոր են:

Եկեղեցականութիւնը արգելած է հայ վարժարաններու մէջ գիտութիւններու, օտար լեզուներու ուսուցումը: Բնա՛ւ: Իր եկեղեցիին հովանաւորութեանը ներքեւ, իր եկեղեցիին պաշտպանութեամբը, իր եկեղեցիին զրամովը հայ պատանեկութիւնը կը սորվի օտար լեզուներ, որոնք իրեն ամէն զերուութիւն կ'ընծային «նոր մտքերի եւ նոր ուղղութիւնների» հետ ընտելանալ: Երբ հայ պատանին եկեղեցական դպրոցներուն մէջ իսկ կը սորվի գիտութեան զանազան ճիւղերը, ա՛լ ինքն է որ իր գիտական միտքը կը շինէ: Եկեղեցականութիւնը ուրիշ ի՞նչ ընէր:

Այսքանը ներկային համար: Իսկ ինչ որ անցեալին կը վերաբերի, այդ մասին ուրիշ բան չունինք ըսելիք բայց եթէ գիտել սալ որ անցեալ պատմութիւնը օրուան դա՛դափարներով չէ որ կը գատուի:

Եւ վերջապէս, նոյն իսկ յառաջգիտական ու պահպանողական պայքարները կրօնական հաւատալիքներու շրջանէն դուրս կը մղուին: Ուրիշ բան է՝ եկեղեցական օրէնքներու բարեփոխման, եկեղեցական ներքին բարեկարգութեանց խնդիրը. ուրիշ բան է՝ «նոր մտքերի եւ նոր ուղղութիւնների» մատախլապատ խնդիրը: Ա. Հ.

ՄՍՐԿՎՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵԾ ԹՇՆԱՄԻՆ. — Այս գրքոյկը զոր կազմած է Տօք. Կ. Յ. Փաշաեան՝ Պարսկաստանի Հակալքողական ընկերութեան հրատարակութիւններու առաջինը կը ներկայացնէ: Այդ ընկերութիւնը անուրանալի է որ օգտակար գործունէութեան մը ծրագիրը ընդգրկած է. ծրագիր մը, որուն յլացումը գրեթէ ամբողջովի կը պարտի Տօք. Փաշաեանին. բայց քանի մը գիտողութիւններ անհրաժեշտ կը դասենք ընել իր հրատարակած առաջին գրքոյկի մասին, որ նախափորձի մը անկատարելութիւնը ունի:

Այդ կարգի ժողովրդային հրատարակութիւններ պէտք է ըլլան պարզ եւ ամփոփ, գրուած հասկնալի լեզուով, առանց մանրամասնութիւններու կնճառութեան:

Ժողովուրդը նախ չի հասկնար այն գիտական զննութիւնները որոնք, օրինակի համար՝ ապացուցած են մէթոլիֆիլասոփարութիւնը, որովհետեւ իրեն կը պակսի մտաւոր հարկաւոր պաշարը. երկրորդ պէտքն ալ չունի հասկնալու քանի որ ինքը հաւատք ունի իրեն ըսուած խօսքերուն ճշմարտութեան վրայ: Ու նկատելով զարձեալ թէ անհաս-

կընալի երկարաբանութիւններ կընան նոյն իսկ ճանճրանալի եւ խրտչեցուցիչ դառնալ, իսպառ հրաժարելու է ժողովրդական հրատարակութիւն մը զանազան տեսութիւններով խճողելէ եւ այդպէսով իր օգտակար դերը տրկարացնելէ :

«Մարդկութեան ամենամեծ թշնամին» գրքոյկը զերծ չէ դժբաղդաբար այդ կարգի պակասութիւններէ : Ու երբ աւելի մօտէն քննենք զայն նոյն իսկ պիտի ներենք մեզի յայտարարել թէ այդ պոօշխրը աւելի պարբերական հանդէսի մը մէջ հրատարակուելու երեւոյթ ունեցող ուսումնասիրութիւն մըն է, քան թէ ժողովրդական հրատարակութիւն մը :

Տօք. Կ. Փաշաեան կը ծանրանայ համաժողովներու (կոնգրէս) վրայ ու մանրակրկիտ հրապարակ կը բերէ անոնց վիճաբանութիւնները եւ տեղեկագրութիւնները ալքոլի վիսասակարութեան դէմ . . . ինչ որ հարկաւոր չէ բնաւ : Խօսիլ, նմանապէս, բժիշկներու յայտնած կարծիքներու, ընկերութիւններու ձեռք առած միջոցներու վրայ, միշտ ալքոլին դէմ, թուականով ու թուահամարով, բոլորովին աւելորդ է, ու այդ բանը կը կրկնենք, երբեք չի հետաքրքրեր ընթերցող ժողովուրդը՝ եթէ զայն ճանճրացնելու վտանգը չունենար ալ :

Ժողովրդային հրատարակութիւն մը պէտք է ունենայ աւելի թելադրական նկարագիր քան թէ փաստաբանական : Այս վերջին կէտի անտեղիութիւնը բացատրեցինք քիչ մը վերը : Գալով թելադրականութեան, «կոչտ իրողութիւններու» սարսեցուցիչ պատկերը ներկայացնելով անգէտ մտքին, կ'ազդենք զօրաւոր կերպով անոր երեւակայութեան վրայ, եւ զայն կը մղենք գէպի զգաստացում : Ուրեմն մարդկութեան վիսասակար տարրերու, ինչպէս ալքոլի, տրհաւիրքները պարզ ու հասկնալի կերպով պատմելը՝ իր բաղձակողմանի առաւելութիւններով ժողովրդական հրատարակութեանց ճշմարիտ ծրագիրը կը կազմէ : Բժիշկ Վահան Արծրունիի հրատարակութիւնները կարելի է իբր օրինակ մատնանիչ ընել :

Աւելցնենք, սակայն, որ Տօթ. Կ. Փաշաեան իր այդ կազմած գրքոյկով, կը վերհանէ, իր ուսումնասիրութեանց մէջ, խիստ մեթոտիկ ծրագրի մը հետեւողի մը յատկանիչը :

ՆՇԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ (Բանասեր).—«Քննադատութեան ոգին» տահմանող կորովի յօդուած մը Մոգ-Պեհէն՝ «Համալսարան»ի այս միացեալ կրկին թիւերուն խմբագրականը կը կազմէ : Նպատակս չէ տակաւին մամլոյ տակ՝ գնահատութեանս ենթարկուած յօդուածի մը մասին գովեստներ շռայլել :

բայց կ'ուզեմ հոս պարզել քանի մը թեւագրումներ, որոնք կը կազմուէին իմ մէջս ժամանակէ մը ի վեր եւ որոնք կ'ամբողջանային այդ յօդուածին հօր շունչին տակ:

Քննադատութիւնը մամուլի շարժիչ ուժը նկատել, քննադատութիւնը մեր մէջ զօրացնել, քննադատութիւնը քաջալերել եւ ջանալ զայն իր առլցուն կատարելութեանը հասցնել՝ ամենէ գեղեցիկ փափաքն է զոր կրնայ ունենալ անհատ մը: Արտասահմանեան թերթ մը, Շարժում, այդ փափաքը նուիրագործող շարք մը յօդուածներ հրատարակեց վերջերս, որոնց մէջ քանի մը անդամներ շատ համակրական ակնարկներ ըրաւ «Համալսարան»ին եւ անոր իմբագրապետին, իրձ յայտնելով տեսնել մեր մամուլի քննադատական լաւագոյն յօդուածները գիտական եւ գրական Ամսաթերթին մէջ, որուն ձօնեց առաջնակարգ վստահութիւն մը: Լրացած նկատելով քննադատութեան սահմանումի գործը, ուրեմն, այսօր տեսութիւն մը պիտի ընենք միայն՝ քննադատութեան խիստ յատկանշական հետեւանքներուն վրայ:

Որքան ալ «մեր մտածածը պարզօրէն եւ եղբայրաբար ըսելու» բնոյթը ունենայ, — ինչպէս կ'առաջարկէ Մոգ-Պէտ, — ձախկուող անհատը կամ խմբագիրը խոտոված՝ եր փրփրի, իր ոչնչութեան համատարած դատարկին մէջ մերթ կը հայհոյէ, մերթ կը նուազի ու վերջապէս վրիժառու կը լինի: Այդ պարագային ընտրուած միջոցները յարաբերական արտայայտութիւն մը ունին վրիժառուին ընկերական կացութեան եւ բարոյական վիճակին հետ, սակայն առանց նուազեցնելու, որքան ալ վրիժառութիւնը — տարտամօրէն յայտնուի հրապարակին վրայ, գձուձ հոգիի մը բարոյական սնանկութիւնը:

«Համալսարան»ի խմբագրութենէն քանի մը շաբաթ առաջ խնդրեցի «Բանասէր» հանդէսին Դ. տարիին երրորդ պրակը, ահաւասիկ ինձ տրուած ապշեցուցիչ պատասխանը.

«Սիրելի Կ. Կ. — Բանասէրի խմբագիրը «Համալսարան»ի «վերջին թիւին մէջ՝ իր մասին ըրած գիտողութիւններ» «բէզ զայրացած, որոշած է խմբագրութեան» իր թերթին «առաքումը դադրեցնել: Ու այդ բանով պ. Կ. Բաս-«մաջեան իր մէջ, անկեղծութեան եւ խոհականութեան «ընդմիջտ պակասի ապացոյցը կուտայ, մինչ մենք զինքը «ջանացած էինք հակառակը ներկայացնել երբ «Ազատ-«նօսի խնդրացող ու խնդացնող հեղուութեանց առար-

«կայ կը դառնար: Անչափահաս մանուկի մը վրիժառու-
 «թեան կը նմանի Բանասերի վարմունքը, մանուկի մը՝
 «որ հօրմէն արժանաւոր ապտակ մը ստացած, քե՛ն կ'ընէ
 «ու հաց չ'ուտէ... կը զրկէ ինքզինքը: Ու դու ալ
 «պիտի ըսես, — օ՛, ես ալ կը զրկուիմ այն քա՛հ, քա՛հ
 «խնդալու հաճոյքէն, զոր կը բերէր ինձ իւրաքանչիւր
 «համարը ՆՈՐ ԲԱՆ ԱՍԷՐի:»

Ես ալ, այո՛, միշտ կարծած էի թէ պ. Կ. Բասմաջեանը
 մէկն է, որ, — ինչպէս ինքը օր մը յաղթականօրէն կը
 յայտարարէր, — «պարելու համար», եւ միայն ապրելու,
 «Բանասէր»ը հրատարակելու մտադրութիւնը կ'ունենար,
 առանց իր հնագիտական սքողուած արժանիքը՝ հաց ճարե-
 լու անձայն ու անշշուկ փութկոտութենէ մը վեր մտատի-
 պարելու:

Փաղափարի, սկզբունքի անհատը սակայն, երբեք իր
 մէջ տեսնելու մեղապարտ մտածումը չէի ունեցած. ու,
 իւրաքանչիւր անգամ, երբ զոհողութիւնը կ'ընէի մտիկ
 ընել զինքը՝ խրատատուի մը պատկառելի պատմուճանին
 պէտքը կը զգայի՝ Ահարոնի զգաստացուցիչ ու հեղնոզ դա-
 ւազանը ձեռքս բռնած: Ու ինչպէ՛ս կ'ունկնդրէր, պ. Կ.
 Բասմաջեան, իր զառիվեր աչքերուն դատարկը առաստա-
 ղին սեւեռած...:

Ու այն մութ հոգեբանութիւնը զոր, այսօր, կը ստու-
 զենք Կ. Բասմաջեանի մէջ, առաւել քան երբեք մեզի հա-
 ւաստիքը կուտայ թէ ոչ միայն խեղճուկրակ մէկը եղած
 է ընդմիշտ, այլեւ հսկայ շահամոլ մը, որուն համար ան-
 տարակոյս իր որոշ սկզբունքը եւ գաղափարը ունեցած է:
 Միթէ այդ ալ արժանիք մը չէ՞...:

Զենք փափաքիր աւելի ծանրանալ հոգեբանութեան
 վրայ անհատի մը որ, մոռցած թէ քանի մը ամիս սուղ
 «Համալսարան»ի խմբագրութեան գիտական եւ զրական
 աջակցութիւնը խնդրած է ծերագիր, չփացած յանդգնու-
 թիւնը կ'ունենայ մութ անկիւններու մէջ, — օ՛, որքան
 խորհրդաւոր եւ պարարտեցուցիչ մութ անկիւններ՝ —
 ուրացումի մղձաւանջային բանագրանքներ կարգալ մեր
 գլխին:

Արդեօք միեւնոյն զուարճացուցիչ «բամբասանքներ»ը
 ըրա՞ւ յարգելի պ. Կ. Բասմաջեան եւ արդեօք անձնատպա-
 նութեան մղող միեւնոյն շնորհալի զրկումը վճռե՞ց, — իր
 խելայիզօրէն գիտական եւ ճամարտակօրէն գրական Բան
 Ասերի պրակները արդէն փոշիացած դէզերու վրայ շղթա-

յելով, — հետեւեալ թերթերու դէմ, որոնք պարոն Կարապետ Յ. Բասմաջեանի գրական, գիտական աւարզով եւ այլնանձանօթ բանասիրական առաքինութիւնները շողքորթելու փութկոտուութիւնը չէին ցոյց տուած :

Կը կարդանք Հանդես Անսօրեայի մէջ (1902 թիւ 4, ապրիլ՝ էջ 126) «Ամսաթերթի վերածուած «Բանասիրի» Ա. եւ Բ. թուերը տեսանք, բայց՝ ցաւով կ'ըսենք, արտաքին տեսքէն չլլացանք . . . : Որչափ ալ պատճառներ յերիւրուին՝ մենք անկածութիւն կ'անուանենք «Բանասէր»ի այժմեան վիճակը . . . »

Կը կարդանք Ժառանգի մէջ (1902—N° I յունուար էջ 148). — «Այդ հանդէսը (Բանասէր) որ առաջ լոյս էր տեսնում տարեկան չորս անգամ, կրում էր «հնագիտական» մակագիրը եւ այդ պատճառով մամուլը քիչ էր զբաղվում նրանով . . . : Լոյս տեսած «Բանասէր»ի յունուարի գրքից տեսնում ենք որ հնագիտական աշխարհներում այնքան էլ լաւ հասկանալի չեն «գրական» եւ գիտական խօսքերը . . . »

«Մշակ», «Շարժում» եւ այլն վերապահումներ յայտնեցին, բացի «Բազմավէպ»էն, որուն թելադրութեան տակ արգէն կը գունափոխուէր (ըստ յայտնութեան պարոն Կ. Յ. Բասմաջեանի) «Բանասէր»ը :

Հետաքրքիր էր իմանալ . . . :

Ու ահաւասիկ դիմակազերծութիւն մը զոր քննադատութեան հետեւանքը կարելի է համարել : Կ. Կ.

ՓԱՐՒՋԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. — Սոյն ընկերութեան 1902ի Նորընտիր վարչական ժողովը, — որուն նախագահն է պ. Արշակ խան Գորոյեանց եւ քարտուղարը պ. Միսաք Պաղտասարեան, — շրջաբերականով մը կը գծէ գործունէութեան նոր ծրագիր մը, եւ հրապարակային հաշուետուութիւն մը կ'ընէ՝ ընկերութեան տասնամեայ գործառնութեանց վրայ :

Ընկերութիւնը հիմնուած է 1892 յունիս 1ին : Մինչեւ 1902 թուականը 30,717 Փռանքի մուսք ունեցած է ու այդ գումարով օգնած է (գրամ կամ ճանապարհածախք) 669 անձի եւ 7 ընտանիքի : Կարօտեալներու թուոյն մօտ խիստ աննշան կարելի է համարել ընկերութեան ունեցած մուտքը, եւ հետեւաբար կրնանք ըսել որ ընկերութիւնը աւելի

անտեսուած է, ցարգ, քան թէ քաջալերուած փարիզաբնակ հայերէն :

Նորընտիր զիւանը կ'ուզէ սակայն ուրիշ հողի մը վրայ դնել Բարեգործ. Ընկերութիւնը : Կը յայտարարէ թէ « պիտի ջանայ . . . կարգ մը ազգօգուտ հաստատութիւններ հիմնելու ձեռնարկել, ինչպէս ընթերցարան, լսարան, կրթարան, արհեստանոց, եւ այլն, որոնցմէ ոչ մէկը գոյութիւն ունի Փարիզի մէջ : »

Իրաւամբ շատ տխուր է տեսնել որ Փարիզի գաղութը, հակառակ իր հաստատուն տարրին բարեկեցիկ վիճակին, չունի որ եւ է հաստատութիւն, որ գիւրացնէ գաղթականութեան փոխադարձ շփումը, ուրկէ պէտք է սպասել խրտացումը կարեւոր ուժերու եւ հետեւաբար ծագումը հաստատական գեղեցիկ գործունէութեան : Ու՛ն, Վ. ժողովը սքաչելի գաղափարն է որ կ'ունենայ այսօր այդ կարգի հաստատութիւններ կանգնելու իր գովելի տրամադրութիւնները հրապարակ դնելով : Նախ ապացոյցը կուտայ հաշուետուութեամբ, թէ իր նախորդներու անփութութենէն վարակուած չէ, եւ հետեւաբար պէտք չէ զայն միեւնոյն անտեսումին ենթարկել : Երկրորդ կը յայտարարէ թէ ոչ մէկ ջանք պիտի չզլանայ իրեն ընծայուած վստահութիւնը լաւապէս գործածելու, եթէ փարիզաբնակ հայերը սթափին ու զայն իրեն շնորհեն :

Ուրեմն գործ կայ, գործող ալ կայ. միայն դրամ կը պակսի, այդ ալ կայ՝ Փարիզի Հայոց քով. վերջիններէն կախումն ունի, բարոյական եւ մտաւոր ամէնէն գեղեցիկ շարժումը ստեղծել՝ Փարիզի լճացած գաղթականութեան մէջ :

Արդի Նորընտիր Վարչական ժողովը բնատիպ գործունէութիւն մը կը սկսի, ու իր յաջողութիւններէն մէկն ալ պիտի ըլլայ ազատել ընկերութիւնը իր անկերպարան վիճակէն, դնելով զայն լաւագոյն հիմներու վրայ, — ինչ որ զայն զերծ պիտի պահէ ապագային մէջ՝ անհատական ախորժակներու խաղալիկ դառնալէ, — որ ժամանակին հետ պիտի ապահովէ ընկերութեան ծաղկեալ վիճակ մը եւ անգիւնաւոր գործունէութիւն մը :

Կ. Կ.

EST - OUEST

ԳՈՐԾԱԿԱԼ ՈՒԹԻՒՆ (AGENCE) ԹՂԹԱԿՑԱԿԱՆ, ՀԵՒԱԳՐԱԿԱՆ
ԵՒ

ՏԵԼԵԾՈՆԱԿԱՆ, ՀԵՏԵՐԵԱԼ ԲԱԹԻՆՆԵՐՈՎ

I. Բաղախական, Հնկերական, երև. խնդիրներ, —
II. Ֆինանսական եւ հնաշոյակական խնդիրներ, — III. Վաճառականական խնդիրներ, — IV. Յայտարարութեան (Publicité) վերաբերող խնդիրներ:

Թղթակցութիւն ամէն լիզուով՝ շաբաթը 2—3 անգամ կամ ամէնօրեայ ըստ կարեւորութեան թերթին եւ տեղւոյն: Մասնաւերջ ձեռագիր ամէն երկրի համար:

Հասցէ:

Փոստի համար՝ 18, Rue Denfert-Rochereau. Paris (Ve)

Հեռագրի համար՝ Davibey — Paris

Տելեֆոն՝ 814—54

Հնդիստանի Տիւրքի

ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԹ-ԲԷԿ

ԺԱՄԱՆԱԿ

Հ Ա Ն Գ Է Ս

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Տնօրէն-Խմբագիր Ս. Գ. Հախումեան: Տարեկան գինն է
25 ֆրանք ամէն տեղ:

Ժամանակի ունի եւրոպական հանդէսների բոլոր բաժինները եւ առանձնապէս ուշադրութիւն կը արձուցնէ գիտական եւ գեղարուեստական բաժինների վրա:

Ժամանակի պատկերները եւ կլիշէները յատկապէս պատրաստուած են Պարիզի առաջնակարգ գործարաններում:
Հասցէ՝ 64, Rue Claude Bernard — Paris

S. Hakoumian

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է ամէն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Եւրոպայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան

30 ֆրանք:

Հասցէն՝ Tifis (Russie) Rédaction

du journal arménien Mschak

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ս Գ Ի Ր

(Խմբագիր-հրատարակիչ Կ. Կրանսիլինիեան)

Բաժանորդագինը՝ արտասահմանում 12 ուրբլի:

Հասցէ՝ Tiflis (Russie). Rédaction de la Revue

Mourtech

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Բ. ՇՐՋԱՆ

Իւրաքանչիւր Շրջանին մէջ կուտայ 12 թիւ: Բաժանորդագրութիւնը թիւի վրայ է:

12 թիւ ամեն երկիր 10 ֆրանք, (4 բուբլի, 2 տոլար):
6 » » » 6 » (2 1/2 » 1տ. 20 ս.):

Տաճկաստանի եւ Պարսկաստանի համար 8 ֆրանք (40 զրշ. ոսկեղրամ):
6 թիւի բաժանորդագրութիւնը այս վերջին երկիրներու համար 5 ֆրանք (25 զրուշ):

Այն կրթական հաստատութիւնները որոնք լայն պիւտճէ մը չունին, կրնան ստանալ 12 թիւը կէս բաժնեգինով, այսինքն 6 ֆրանքի:

Նամակ կամ բաժնեգին եւ թղթակցութիւն ղրկել Տնօրէն-խմբագրին՝

Missac Baghdassarian

4, rue Ortolan — PARIS (5)

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Ախլցիսա (Ռուսիա)	Արժ. Տ. Ներսէս քհյ. Համբարձումանց
Դալիքեժ (Պարսկ.)	Տօք. Կարապետ Փաշեան
Եգիպտոս (Գահիրէ)	Պարոն Միհրան Չրաքեան
Թիֆլիս (Ռուսիա)	Արժ. Տ. Եզնիկ Աւագ քհյ. Երզնկեանց
Լին (Ամերիկա)	Պարոն Յակոբ Պէրպէրեան
Խարբերդ	Պարոն Ռուբէն Չարգարեան
Տրապիզոն	Պարոն Պ. Սիմաւոնեան

ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ ” ՀԱՄԱԼՍԱՐԱՆ”Ի

Ա. Շրջան Համալսարանի (12 թիւ	անոնց կազմի)	10 ֆրանք
» » »	» թղթակազմ	12 »
» » »	» կէս կաշի	15 »
» » »	» կէս կաշի ոսկեղօժ	20 »
Ֆրանսահայ պատկերազարդ բառարան (A—H)		
(Իշխան Գ. Լուսինեան)		25 »
Դիւցա՛ գնօրէն (Ատոմ Եարճանեան)		1 եւ 2 »
Մկա Վախ Զուհիմ (Գիւլստանցի)		— 50անթ
Ուխտ (Բէլլուբէկեան)		1 »

Այս հրատարակութիւնները մեծաքանակ գնողներուն գոհացուցիչ զեղջ կը լինի:

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի (Պ. Միսախ) տպարանին մէջ կը լինին ամեն ջնասի տպագրական աշխատութիւններ խիստ խնամուած կերպով եւ պահանջուած կատարեալ նրբութեամբ:

Յանձնարարութիւնները կանխիկ են եւ կը կատարուին ճշգրտութեամբ:

«Համալսարան»ի Ա. Շրջանի համարները սպառելու վրայ են, մեր այն նոր բաժանորդները՝ որ կը փափաքին ունենալ «Համալսարան»ի Ա. Շրջանի համարները, կը վճարեն բացառաբար «կէս կաշի» կազմին համար 12 ֆրանք եւ «կէս կաշի ոսկեղօժ»ին 15 ֆրանք:

Տպարան-Գրատան վերաբերեալ ամեն յանձնարարութիւն ղրկել խմբագրապետին անուան: